2016, ՀՈՒՆԻՍ Բ, ԹԻՎ 12 (464)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԱՅՑ ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԵՐԿԻՐ

Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի այցը Հայաստան

Հունիսի 24-ին սկսվեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի եռօրյա այցը Հայաստանի Հանրապետություն՝ «Այց առաջին քրիստոնյա երկիր» կարգախոսի ներքո:

Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու Հովվապետին «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում դիմավորեցին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը՝ պատվիրակությունների ուղեկցությամբ, ինչպես նաեւ՝ Կաթոլիկ եւ Հայ Կաթողիկե Եկեղեցիների ներկայացուցիչների:

Ինքնաթիռի վայրէջքից հետո շարժասանդուղքի մոտ տեղի ունեցավ երկու առաքելահաստատ Եկեղեցիների Հովվապետերի եղբայրական ողջագուրումը, ապա Հռոմի Սրբազան Քահանայապետին ողջունեցին ՀՀ նախագահը եւ առաջին տիկին Ռիտա Սարգսյանը:

Ազգային տարազներով երկու պատանիներ Ֆրանցիսկոս Պապին հայկական ծիրան եւ լավաշ մատուցեցին: Տիգրան Հեքեքյանի ղեկավարությամբ «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը Հռոմի Սրբազան Քահանայապետին ողջունեց միջնադարյան շարականների կատարմամբ: Հռոմեական Եկեղեցու Գահակալին օդանավակայանում դիմավորեցին պատվո պահակախմբով, զինվորական նվագախմբով ու քայլերթով:

Այս ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ՀՀ նախագահը Հռոմի Ֆրանցիսկոս Պապին ներկայացրեցին պատվիրակությունների անդամներին: Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու պատվիրակության կազմում էին Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանը, ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանը, Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը եւ Մայր Աթոռի միջեղեկեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե ծ. վրդ. Անանյանը:

Օդանավակայանում ՀՀ նախագահի հետ կարճատեւ զրույցից հետո Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ու Հռոմի Սրբազան Քահանայապետը պատվիրակությունների ուղեկցությամբ մեկնեցին Ս. Էջմիածին:

Մայր Աթոռում երկու Հայրապետերին դիմավորեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությունը եւ պաշտոնեությունը: Այս առիթով Հայաստանից եւ Սփյուռքից հայոց հոգեւոր կենտրոն ժամանած բազում ուխտավորներ դրոշակներով եւ պաստառներով նույնպես ողջունեցին Ֆրանցիսկոս Պապին:

Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների հոգեւորականներից կազմված հանդիսավոր թափորը, Մայր տաճարի ավետաբեր ղողանջների եւ «Հրաշափառ Աստուած» շարականի երգեցողության ներքո, Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հռոմի Սրբազան Քահանայապետին առաջնորդեց միածնաէջ Մայր տաճար:

Տաճարում երկու Հովվապետերը խոնարհվեցին իջման սբ Սեղանի առջեւ՝ համբուրելով գրակալի վրա դրված սբ Ավետարանը եւ Երնջակի մասունքակիր սբ խաչը, ապա բարձրացան Մայր տաճարի ավագ խորան, ուր սբ Սեղանի առջեւ տեղի ունեցավ եղբայրական ողջագուրում:

Համատեղ սաղմոսասացությունից հետո Ֆրանցիսկոս Պապն ընթերցեց «Ի մէջ տաճարիս» աղոթքը, ապա Մայր տաճարի երգչախումբը կատարեց «Էջ Միածինն ի Հօրէ» շարականը:

Այնուհետեւ Հռոմի Սրբազան Քահանայապետը «Պահպանեա զմեզ, Քրիստոս Աստուած մեր» աղոթքով օրհնեց տաճարում ներկա բարեպաշտ հավատավոր ժողովրդին:

Աղոթքից հետո Հռոմի Ֆրանցիսկոս Պապին ողջունեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

→

Հռոմի Սրբազան Քահանայապետ

Վեհափառ Հայրապետը մասնավորապես ասաց.

«Ձե՛րդ Սրբություն,

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս,

Գոհություն եւ փառք ենք մատուցում Աստծուն, որ այսօր միածնաէջ այս սուրբ տաճարում եղբայրական սիրով ու աղոթքով ողջունում ենք Ձերդ Սրբությանը եւ Ձեզ ուղեկցող պատվիրակությանը: Խորապես զգացված ենք, որ Մեր հրավերին ընդառաջ՝ այցելեցիք Հայաստան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Հինավուրց այս տաճարը Աստծո հետ մեր ժողովրդի կնքած սրբազան ուխտի խորախորհուրդ վկայությունն է: Նվիրական այս սրբավայրում իջավ Հիսուս Քրիստոս եւ Իր Սուրբ Աջով հաստատեց Սուրբ Էջմիածինը՝ սրբություն սրբոցը համայն հայության: Աստվածային նախախնամությամբ հայոց երկրորդ Լուսավորիչ, առաքելապատիվ սուրբ Գրիգոր հայրապետի տեսիլքով ու անխոնջ ջանքերով նորոգվեցին սուրբ Թադեոս եւ սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ մեր ժողովրդի սրտում վառված հավատքի կանթեղները: Այդ օրից ի վեր Սուրբ Էջմիածնից ճառագող լույսը միավորում է մեր ժողովրդին տապանակիր Արարատի շուրջ սփռված իր հայրենիքով, իր սրբություններով, իր պատմությամբ: Անչափ ուրախ ենք, որ այսօր միածնաէջ այս սուրբ տաճարում ի փառս Աստծո միավորվում են սուրբ Պետրոս եւ սուրբ Թադեոս ու սուրբ Բարդուղիմեոս առաքյալների Աթոռների Գահակալներիս աղոթքները՝ հայցելով մեր հավատացելոց եւ ողջ աշխարհի համար խաղաղություն, սիրո ու եղբայրության ամուր ոգի եւ համագործակցության արգասավորում:

Այս պահին ջերմ զգացումներով ենք հիշում 2001 թվականին Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով սուրբ Հովհաննես Պողոս Բ Պապի այցը Հայաստան: Այն սուրբ Պետրոսի Աթոռի Գահակալի առաջին այցելությունն էր մեր երկիր, որը մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերություններում գործակցության նոր խթան հանդիսացավ: Մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների առավել սերտացման գործում նշանակալի ավանդ եք բերել նաեւ Դուք՝ Ձեր ծառայագործության հանգրվաններում առանձնակի ջերմություն դրսեւորելով Հայ Եկեղեցու եւ մեր ժողովրդի նկատմամբ: Ձերդ Սրբության այցելությունը նոր վկայություն է մեր Եկեղեցիների եղբայրության եւ գործակցության, որը երկուստեք զորացնում է հայ առաքելական ու կաթոլիկ հավատացյալներին եւ տոգորում լավատեսությամբ, որ մեր կյանքում առավել զգալի պիտի լինեն քրիստոնեական սիրով շաղախյալ մեր հավատքի վկայությունները:

Մեր ժողովրդի զավակները երախտագիտությամբ են հիշում Սուրբ Պետրոս Մայր տաճարում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին մատուցած Ձեր հանդիսավոր Պատարագը՝ ցեղասպանությունը դատապարտող պատմական ճառով: Գոհություն ենք հայտնում Աստծուն, որ այսօր այստեղ Ձերդ Սրբության, Կաթոլիկ Եկեղեցու զավակների, Ձեր այցի առիթով տարբեր երկրներից Հայաստան ժամանած բազմաթիվ հայորդյաց ու հայրենաբնակ մեր ժողովրդի հետ միասնաբար կարող ենք աղոթել եւ հայցել Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների բարեխոսությունը, որոնց արյան վկայությունը ոչ միայն հայոց, այլ նաեւ քրիստոնեական ընդհանուր հավատքի հաղթանակի հավաստիքն է: Ինչպես առաքյալն է ասում, շատերի գոհությամբ առատացած շնորհը ավելանում է ի փառս Աստծո (հմմտ. Բ Կորնթ. Դ 15):

Հայոց ցեղասպանության եւ խորհրդային աստվածմերժության տարիների ավերներից հետո՝ այսօր, հայրենի անկախ պետականության պայմաններում մեր Եկեղեցին հոգեւոր նոր զարթոնք է ապրում՝ ազատորեն իրականացնելով տերունավանդ իր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: Մեր Եկեղեցին նաեւ առավել մասնակցություն է բերում համաքրիստոնեական կյանքին՝ խորին համոզումով, որ աշխարհում առկա հոգեւոր, քաղաքական, տնտեսական ու մարդասիրական ճգնաժամերի խորացման այս ժամանակաշրջանում առավել քան կարեւորվում են քույր Եկեղեցիների միասնական աղոթքն ու գործակցությունը հանուն Քրիստոսի Սուրբ Եկեղեցու առաքելության արգասավորման, աշխարհում հոգեւոր-բարոյական արժեքների պահպանման ու արժեւորման, մերձավորի հանդեպ սիրո զորացման, որոնցով կյանքում կարող են մարմնավորվել ապահովության եւ բարօրության իրական արդյունքները:

Աղոթք ենք բարձրացնում Քրիստոսի Սուրբ Եկեղեցու հաստատունության եւ պայծառության, մեր Տիրոջ պարգեւած սիրո ու հաճության ոգու տարածման եւ աշխարհում խաղաղության ու համերաշխ կյանքի ամրապնդման համար: Հայցում ենք Ձերդ Սրբությանը Տիրոջ զորակցությունը եւ մաղթում ընդ երկայն ավուրս քաջառողջ, արդյունագարդ գահակալություն՝ ի պայծառություն Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու եւ ի մխիթարություն հավատացելոց:

Բարի եք եկել աստվածաշնչյան երկիր Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի ողորմությունը, շնորհներն ու օրհնությունը թող լինեն մեզ հետ եւ ամենքի. ամեն»:

Պատասխան ուղերձով հանդես եկավ Ֆրանցիսկոս Պապը.

«Մեծարգո՛ եղբայր,

Ծայրագույն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց,

Սիրելի՛ եղբայրներ եւ քույրեր ի Քրիստոս:

Հուզումով ոտք դրեցի ձեր ժողովրդի պատմության վկայի, նրա հոգեկանության լուսաշող կենտրոնի, այս սրբազան վայրի շեմին եւ Աստծու թանկագին պարգեւն եմ համարում, որ կարողացա մոտենալ սուրբ Սեղանին՝ որից Քրիստոսի լույսը սփռվեց Հայաստանում: Ողջունում եմ Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սրբություն Գարեգին Բ-ին՝ շնորհակալություն հայտնելով Ս. Էջմիածին այցելելու հաճելի հրավերի համար: Հայ Առաքելական Եկեղեցու արքեպիսկոպոսներին եւ եպիսկոպոսներին եւ շնորհակալություն եմ հայտնում բոլորին՝ սրտագին եւ ցնծալի ընդունելության համար, որ ինձ պարգեւեցիք: Շնորհակալություն, Ձե՛րդ Սրբություն, ինձ՝ Ձեր տանը հյուրընկալելու համար. սիրո այս նշանը բառերից շատ ավելի պերճախոս կերպով արտահայտում է, թե ինչ են նշանակում ընկերությունն ու եղբայրական սերը:

Այս հանդիսավոր առիթով Տիրոջը գոհություն եմ մատուցում ձեր երկրում վառած հավատի լույսի համար: Հավատ, որ Հայաստան աշխարհին տվեց իր ուրույն ինքնությունը եւ նրան Քրիստոսի պատգամաբերը կարգեց ազգերի մոտ: Քրիստոս է Ձեր փառքը, Ձեր լույսը, արեգակը, որ Ձեզ լուսավորեց եւ նոր կյանք պարգեւեց, որ Ձեզ ուղեկցեց եւ սատարեց հատկապես մեծագույն փորձությունների պահերին: Խոնարհվում եմ Տիրոջ ողորմության առաջ, որ կամեցավ Հայաստանը լիներ առաջին ազգը, 301 թվականից, ընդունելու քրիստոնեությունը՝ որպես իր կրոնը, այնպիսի ժամանակաշրջանում, երբ հռոմեական կայսրության մեջ դեռ բորբոքվում էին հալածանքները:

Քրիստոսի հավատը Հայաստանի համար չի եղել որպես զգեստ, որ կարելի է հագնել կամ հանել, պարագաների կամ առիթների համաձայն, այլ սեփական ինքնության բաղկացուցիչ իրականություն, գերազանց պարգեւ՝ ուրախությամբ ընդունելի եւ ժրաջանությամբ եւ ուժով պահպանելի: Ինչպես գրեց սուրբ Հովհաննես Պողոս Բ-ն, «հայ հասարակության «Մկրտությամբ» [...] ծնունդ է առնում ժողովրդի նոր ինքնություն, որ հայ լինելու անբաժանելի եւ բաղկացուցիչ մաս է դառնալու: Այդ պահից այլեւս անհնար է մտածել, որ տվյալ ինքնության բաղադրիչների շարքում տեղ չգտնի Քրիստոսի հավատը՝ որպես էական բաղկացուցիչ» (Առաքելական նամակ հայ ժողովրդի մկրտության 1700 հոբելյանի առիթով [2 փետրվար 2001], 2)*: Տերը թող օրհնի ձեզ՝ հավատի այս լուսավոր վկայության համար, որ օրինակելի կերպով ապացուցում է առավել քան հազար յոթ հարյուր տարի առաջ ընդունած Մկրտության հզոր արդյունավետությունն ու բեղունությունը, մարտիրոսության պերճախոս եւ սուրբ նշանով, որ ձեր ժողովրդի պատմության կայուն մասնիկն է դարձել:*

Գոհություն եմ մատուցում Տիրոջը նաեւ այն ընթացքի համար, որ Կաթողիկե Եկեղեցին եւ Հայ Առաքելական Եկեղեցին կատարեցին եղբայրական եւ անկեղծ երկխոսության միջոցով՝ հասնելու համար լիարժեք կիսելու գոհության Սեղանը: Սուրբ Հոգին թող օգնի մեզ իրականացնելու այն միությունը, որի համար աղոթեց մեր Տերը, որպեսզի Իր աշակերտները մի լինեն, եւ աշխարհը հավատա: Ինձ հաճելի է հիշել այժմ մեր երկու Եկեղեցիների միջեւ հարաբերությունների խորացման եւ երկխոսության ամրապնդման՝ վերջերս տրված վճռորոշ մղումը, Նորին Սրբություններ Վազգեն Ա-ի եւ Գարեգին Ա-ի եւ սուրբ Հովհաննես Պողոս Բ-ի եւ Բենեդիկտոս ԺԶ-ի կողմից: Համամիութենական այս ջանքերի՝ հատկապես նշանակալից փուլերի շարքում հիշում եմ Ի դարի հավատի վկաների հիշատակությունը 2000 թվականի մեծ հոբելյանի շրջանակներում. Ձերդ Սրբության հանձնումը քրիստոնյա Հայաստանի Հոր՝ սբ Գրիգոր Լուսավորչի մասունքից՝ Երեւանի նորակառույց տաճարի համար. Նորին Սրբություն Հովհաննես Պողոս Բ-ի եւ Ձերդ Սրբության ստորագրած համատեղ հայտարարությունը՝ ճիշտ այստեղ՝ Սուրբ Էջմիածնում. ինչպես նաեւ Ձերդ Սրբության կատարած այցերը Վատիկան՝ կարեւոր պահերի եւ հիշատակությունների առիթով:

Դժբախտաբար աշխարհը բաժանումներով եւ ընդհարումներով է խարանված, ինչպես նաեւ՝ նյութական եւ հոգեւոր աղքատության ծանր վիճակներով՝ ներառյալ մարդկանց, նույնիսկ երեխաների եւ ծերերի չարաշահումը, եւ ակնկալվում է քրիստոնյաներից փոխադարձ գնահատման եւ եղբայրական համագործակցության վկայություն, որպեսզի կրկին փայլի ամեն խղճի առաջ Քրիստոսի Հարության զորությունն ու ճշմարտությունը: Համբերատար եւ մշտանորոգ ջանքը դեպի լիարժեք միություն, համատեղ ձեռնարկների հզորացումը եւ ի տես հասարակաց բարիքի, Տիրոջ բոլոր աշակերտների մեջեւ համագործակցությունը՝ նման են փայլակնացայտ լույսի՝ խավարամած գիշերվա մեջ, եւ կանչ է ապրելու սիրով եւ նույնիսկ տարբերությունների փոխըմբռնմամբ: Համամիութենական ոգին օրինակելի է դառնում նաեւ եկեղեցական հասարակության տեսանելի սահմաններից դուրս եւ բոլորի համար ներկայացնում է մի զորավոր կոչ՝ տարակարծությունները հարթելու երկխոսությամբ եւ արժեւորելով այն, ինչ միացնում է: Համամիութենական ոգին միաժամանակ արգելում է հավատի չարաշահումն ու շահարկումը, որովհետեւ պարտավորեցնում է հայտնաբերել նրա հարազատ արմատները, հաղորդել, պաշտպանել եւ տարածել ճշմարտությունը՝ յուրաքանչյուր մարդկային էակի արժանապատվության պահպանմամբ, եւ այնպիսի ձեւերով, որոնցից թափանցի այն սիրո եւ փրկության ներկայությունը, որ ցանկանում ենք սփռել: Այսպես, համոզիչ վկայություն ենք տալիս աշխարհին,- որ նրա ահավոր կարիքն ունի,- թե Քրիստոս կենդանի է եւ գործուն, կարող՝ ազգերի, մշակույթների եւ կրոնների միջեւ միշտ նորանոր հաշտության ճանապարհներ բացելու: Վկայում ենք եւ հավատացնում, որ Աստված սեր է եւ գթասրտություն:

Սիրելի՛ եղբայրներ, երբ մեր գործը ներշնչված է եւ մղված Քրիստոսի սիրո ուժով, զարգանում են փոխադարձ ճանաչումն ու համարումը, ստեղծվում են լավագույն պայմաններ համամիութենական պտղաբեր ընթացքի, եւ միաժամանակ մատնանշվում է յուրաքանչյուր բարի կամք ունեցող անձի եւ ամբողջ հասարակության՝ առարկայական երթեւեկելի ճանապարհ՝ ներդաշնակելու համար հակամարտությունները, որ պատառոտում են քաղաքակիրթ կյանքը եւ փորում են դժվար բուժվող բաժանումներ: Ամենակարողն Աստված՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, բարեխոսությամբ ամենասրբուհի Մարիամի, «սիւն լուսոյ Հայաստանեայց Եկեղեցւոյ» Գրիգոր Լուսավորչի եւ Եկեղեցու Վարդապետ սուրբ Գրիգոր Նարեկացու, օրհնի բոլորիդ եւ ամբողջ հայ ազգը եւ միշտ պահպանի այն հավատի մեջ, որ ստացել է հայրերից եւ փառավոր վկայություն տվել դարեդար»:

Ֆրանցիսկոս Պապի այցը Հայաստան

Արձակման աղոթքից հետո, Հայրապետական մաղթերգի ներքո, եկեղեցականների թափորը ժողովրդին իրենց օրհնությունը բաշխող Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին եւ Ֆրանցիսկոս Պապին առաջնորդեց Վեհարան:

Այդ ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Հռոմի Սրբազան Քահանայապետը մի պահ կանգ առան նաեւ երջանկահիշատակ Վազգեն Ա եւ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսների շիրմաքարերի առջեւ՝ իրենց հարգանքն ու խոնարհումը բերելով վերջիններիս պայծառ հիշատակին: Վեհարանի մուտքի մոտ երկու Հովվապետերը նաեւ ունկնդրեցին «Փարոս» կամերային երգչախմբի կատարումները:

Հրաշափառի արարողությանը ներկա էին աշխարհասփյուռ Հայ Եկեղեցու թեմերից ժամանած պատվիրակներ, պետական պաշտոնյաներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարներ եւ բազմահազար ուխտավորներ:

❖❖❖

Հունիսի 24-ի երեկոյան Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հանդիպումը, որին ներկա էին Կաթոլիկ Եկեղեցու պատվիրակությունը, Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց դասը, Հայաստանից եւ Սփյուռքից ժամանած թեմական առաջնորդներ եւ առաջնորդական տեղապահներ:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը բարի գալուստ մաղթեց Հռոմի Սրբազան Քահանայապետին աստվածաշնչյան Հայոց երկիր եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ իր եղբայրական սերն ու բարեմաղթանքները փոխանցելով նաեւ պատվիրակության անդամներին.

«Այսօր ուրախություն է մեր տանը եւ մեր հոգիներում, քանզի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին է այցելել սիրեցյալ մեր եղբայրը, որի հանդեպ առանձնակի ջերմ վերաբերմունք ունի հայ ժողովուրդը: Դրա վառ վկայությունն է նաեւ մեր աշխարհասփյուռ թեմերի բաձրաստիճան հոգեւորականների ներկայությունը, ովքեր եկել են իրենց համայնքների հավատացյալների հետ: Ձեր այցը մեր ժողովուրդը դիտարկում է որպես առիթ եւ հնարավորություն իր երախտագիտության զգացումներն արտահայտելու մեր ժողովրդի, Հայ Եկեղեցու եւ պետության նկատմամբ Ձեր ջերմ վերաբերմունքի համար: Մենք այս նվիրական սրբավայրում մեր աղոթքն ենք բարձացնում դեպի երկինք՝ հայցելով, որ Տերը Ձեզ քաջառողջ երկար տարիներ պարգեւի՝ առաջնորդելու համար Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին, քույր Եկեղեցիների հոգեւոր առաջնորդների եւ հավատացյալների հետ իրականացնելու եւ արդյունավորելու Քրիստոսի Սուրբ Եկեղեցու առաքելությունը՝ ի սեր առավել բարօր ու խաղաղ աշխարհի եւ մարդկության երջանկաբեր կյանքի»:

Իր հերթին Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու առաջնորդ Ֆրանցիսկոս Պապը եղբայրական սիրո եւ ջերմ ընդունելության համար շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ շեշտելով, որ Ս. Էջմիածնում ինքն իրեն զգում է ինչպես տանը: Գարեգին Բ Վեհափառի խոսքում կարեւորելով միասնական աղոթքն ու խաղաղությունը՝ Հռոմի Սրբազան Քահանայապետը հավելեց, որ իբրեւ Եկեղեցիներ՝ կոչված են այդ խաղաղության քարոզիչները լինելու:

Հավարտ հանդիպման՝ տեղի ունեցավ երկու Եկեղեցիների պատվիրակությունների փոխադարձ ներկայացում, եւ կատարվեց նվերների փոխանակում:

Այցի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հռոմի Սրբազան Քահանայապետին ընծայեց սբ Պատարագի սկիհ, որի երկու կողմերում պատկերված են Վատիկանի Ս. Պետրոսի տաճարն ու Ս. Էջմիածնի Մայր տաճարը, երկու Եկեղեցիների հիմնադիր սուրբ առաքյալները:

Նորին Սրբությունը Սրբազան Քահանայապետին նվիրեց նաեւ Հայոց ցեղասպանության նահատակների սրբապատկեր եւ մանրաքանդակի հայտնի վարպետ Է. Տեր-Ղազարյանի թռռան կողմից պատրաստված Ֆրանցիսկոս Պապի դիմապատկերի սաթե մանրաքանդակը: Իսկ Հռոմի Պապը Վեհափառ Հայրապետին նվիրեց Ս. Աստվածածնի խճանկար:

Վերջում Ֆրանցիսկոս Պապն արձանագրություն թողեց Վեհարանի հիշողությունների մատյանում:

Հանդիպումից հետո տեղի ունեցավ երկու Հովվապետերի առանձնազրույցը:

❖❖❖

Հունիսի 25-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապն **այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր,** ուր երկու Հովվապետերին դիմավորեցին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը եւ առաջին տիկին Ռիտա Սարգսյանը:

Եկեղեցականների թափորը պատվո պահակների առաջնորդությամբ ուղղվեց դեպի Հայոց ցեղասպանության նահատակների հուշարձան: Հուշակոթող տանող ճանապարհին կանգնած էին մանուկներ՝ Հայոց ցեղասպանության նահատակների սրբապատկերներով: Ի հիշատակ նահատակների՝ ծաղկեպսակի զետեղումից հետո հնչեց Վատիկանի պետական օրհներգը:

Այնուհետեւ անմար կրակի առջեւ, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ու Հռոմի Ֆրանցիսկոս Պապի, կատարվեց բարեխոսական կարգ, որի ժամանակ հնչեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակներին նվիրված «Հրաշացան պակուցմամբ» շարականը, երկու Եկեղեցիների հոգեւորականների կողմից ընթերցվեցին սուրբգրային հատվածներ, սաղմոսներ եւ քարոզներ:

Արարողությունն ամփոփվեց Հռոմի Ֆրանցիսկոս Պապի աղոթքով, որով Սրբազան Քահանայապետը հայցեց հանուն հավատքի եւ հայրենյաց իրենց կյանքն ընծայաբերած սուրբ նահատակների բարեխոսությունը հայոց ազգի եւ համայն աշխարհի համար: Արարողության ավարտին հնչեց հայկական դուդուկ Հայաստանի ժողովրդական արտիստ Ջիվան Գասպարյանի, վաստակավոր արտիստներ Գեւորգ Դաբաղյանի եւ Կամո Սեյրանյանի կատարմամբ:

Վերջում ՀՀ նախագահը եւ երկու Հովվապետերն այցելեցին Հիշողությունների պուրակ, որտեղ Ֆրանցիսկոս Պապը ջրեց իր անվամբ տնկված մշտադալար եղեւնին:



Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցի ավարտին Ֆրանցիսկոս Պապին մոտեցան Հայոց ցեղասպանությունը վերապրածների մի խումբ ժառանգներ, որոնց նախնիները Մեծ եղեռնի տարիներին Պիուս ԺԱ Պապի որոշմամբ ապաստան էին գտել պապական Կաստել Գանդոլֆո դղյակ-ամառանոցում:

Հռոմի Սրբազան Քահանայապետը նաեւ գրառում կատարեց պատվո հյուրերի մատյանում. *«Այստեղ աղոթում եմ՝ ցավը սրտիս մեջ, որպեսզի այլեւս երբեք նման ողբերգություններ, ինչպիսին սա է, չկրկնվեն, որպեսզի մարդկությունը չմոռանա եւ իմանա չարությանը բարությամբ հաղթել: Թող Աստված պարգեւի սիրեցյալ հայ ժողովրդին եւ ամբողջ աշխարհին խաղաղություն եւ մխիթարություն: Աստված պահպանի հայ ժողովրդի հիշողությունը: Հիշողությունը չի կարելի ո՛չ պղտորել, ո՛չ մոռանալ: Հիշողությունը խաղաղության եւ ապագայի աղբյուրն է»*:

❖❖❖

Հունիսի 25-ին՝ Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցելությունից հետո, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապը մեկնեցին Գյումրի:

«Շիրակ» օդանավակայանում Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հռոմի Սրբազան Քահանայապետին դիմավորեցին Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանը, Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի եւ Արեւելյան Եվրոպայի հայ կաթոլիկների առաջնորդ Ռաֆայել արք. Մինասյանը, Շիրակի մարզպետ Հովսեփ Սիմոնյանը եւ Գյումրու քաղաքապետ Սամվել Բալասանյանը: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ, Բերիո թեմի առաջնորդ Շահան արք. Սարգսյանը, ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արք. Պարսամյանը, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս. Խաչատրյանը, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան եպս Ժամկոչյանը, Սյունիքի թեմի առաջնորդական փոխանորդ Մակար վրդ. Հակոբյանը, Ս. Գայանե վանքի վանահայր Անանիա աբդ. Ծատուրյանը եւ գավազանակիր Աղան աբդ. Երնջակյանը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հռոմի Սրբազան Քահանայապետը ժամանեցին Գյումրիի Ս. Վարդանանց կենտրոնական հրապարակ, ուր Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապը մատուցեց սբ Պատարագ:

Մինչեւ սբ Պատարագի սկսվելը՝ ողջույնի խոսք ասաց Ամենայն Հայոց Կաթողիկոսը.

«Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց. ինչպէս Ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեանց սիրեցէք» (Հովհ. ԺԳ 34):

Ձե՛րդ Սրբություն,

Սիրեցյա՛լ հոգեւոր եղբայրներ եւ բարեպաշտ հավատացյալներ,

Այսօր, երբ մեր Եկեղեցին հիշատակում է Տիրոջ սուրբ առաքյալների տոնը, որքան քաղցրահունչ ու առավել ուժգնությամբ է հնչում մեր հոգիներին այս պատգամը, որը մեր Տերն ուղղեց Իր աշակերտներին: Տերունապատվեր սիրո այս ջերմ զգացումով հանուն տարածաշրջանի ողջ հավատացելոց՝ բարի գալուստ ենք մաղթում Ձեզ, սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, Գյումրի քաղաք:

Շարունակությունը՝ էջ 6

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

14 հունիսի **Ղազախստանի նորանշանակ դեսպանին**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Թիմուր Ուրազաեւին:

Նշանակման առիթով շնորհավորելով դեսպանին՝ Նորին Սրբությունն արդյունավոր գործունեություն մաղթեց նրան՝ ի նպաստ երկու ժողովուրդների միջեւ եղբայրական կապերի առավել սերտացման: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու պետությունների միջեւ առկա գործակցությանը՝ հավելելով, որ դրան նպաստում են նաեւ Ղազախստանում հայ համայնքի առկայությունը եւ վերջինիս ակտիվ ներգրավվածությունը երկրի տարբեր ոլորտներում:

Նորին Սրբությունը, ի դեմս դեսպանի, նաեւ իր վշտակցությունը հայտնեց Ղազախստանի ողջ ժողովրդին՝ վերջերս Ակտոբե քաղաքում տեղի ունեցած ահաբեկչական գործողությունների կապակցությամբ, որոնց զոհ գնացին անմեղ քաղաքացիներ: Խոսելով մարդկության առջեւ ծառացած մարտահրավերների մասին՝ Նորին Սրբությունը կարեւորեց հոգեւոր եւ քաղաքական առաջնորդների ջանքերի մեկտեղումը՝ հանուն հոգեւոր-բարոյական արժեքների զորացման եւ խաղաղության հաստատման:

Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետը գնահատանքով անդրադարձավ նախագահ Ն. Նազարբաեւի նախաձեռնությամբ Ղազախստանում պարբերաբար գումարվող համաշխարհային եւ ավանդական կրոնների հոգեւոր առաջնորդների գագաթնաժողովների դերակատարությանը՝ կարեւորելով նման համախմբումների անհրաժեշտությունը մարդկության խաղաղ կյանքի կերտման գործում:

Դեսպան Թ. Ուրազաեւը, խոսելով երկու ժողովուրդների բարեկամության եւ երկրների գործակցության մասին, ընդգծեց ժողովուրդների միջեւ հոգեւոր, մշակութային կապերի առավել զորացման անհրաժեշտությունը: Ղազախստանի դեսպանը նաեւ կարեւորեց համատեղ քայլերի ձեռնարկումը՝ ի խնդիր մարդկային կյանքն արատավորող երեւույթների կանխարգելման: Այս կապակցությամբ դեսպանը շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ համաշխարհային եւ ավանդական կրոնների հոգեւոր առաջնորդների գագաթնաժողովների կազմակերպման գործում Հայ Եկեղեցու կողմից ցուցաբերվող զորակցության համար:

14 հունիսի **«Գլոբալ բրիդջիզ» միջազգային կազմակերպության անդամներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սբ Էջմիածնի «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում ընդունեց «Գլոբալ բրիդջիզ» միջազգային կազմակերպության անդամներին՝ ուղեկցությամբ ՀՀ-ում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Բերնհարդ Մաթիաս Քիսլերի:

Հանդիպման սկզբում, շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանը՝ ընդունելության համար, դեսպան Քիսլերը կարեւորեց «Գլոբալ բրիդջիզ»-ի հերթական կոնֆերանսի անցկացումը Հայաստանում, որի նպատակն է մերձեցնել տարբեր ազգության երիտասարդների, խթանել նրանց միջեւ համագործությունն ու համատեղ ծրագրերի իրականացումը:

Ողջունելով հյուրերին՝ Ամենայն Հայոց Հայրապետը կարեւորեց կազմակերպության անդամների համագործակցությունը Հայաստանի երիտասարդության հետ եւ հույս հայտնեց, որ նման կապերի հաստատումը դրական ներգործություն կունենա նաեւ տարածաշրջանի խնդիրների եւ մարտահրավերների հաղթահարման հարցում: Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մասնավոր անդրադարձ կատարելով ղարաբաղյան հակամարտությանը, ընդգծեց, որ «Գլոբալ բրիդջիզ» կազմակերպությունը՝ հավատարիմ իր առաքելությանը, կարող է իր ներդրումն ունենալ հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում՝ երկխոսություն ձեւավորելով հայ եւ ադրբեջանցի երիտասարդության միջեւ:

Արգասաբեր գործունեություն եւ առաքելություն մաղթելով կազմակերպության անդամներին՝ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ երիտասարդությունն ապագայի իր տեսլականով, կյանքը բարեփոխելու վճռականությամբ եւ նախանձախնդրությամբ պիտի կարողանա ջանքերի համադրմամբ դրական արդյունքներ արձանագրել աշխարհի բարօրության կերտման, մարդկանց խաղաղ համակեցության, ազգերի եւ պետությունների միջեւ գործակցության հաստատման ոլորտներում:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը, ի դեմս ՀՀ-ում Գերմանիայի դեսպանի, խորին երախտագիտություն հայտնեց Գերմանիայի իշխանություններին եւ ողջ ժողովրդին՝ Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի ընդունման առնչությամբ:

Հանդիպման վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց ներկաների հարցերին, որոնք վերաբերում էին ղարաբաղյան հակամարտությանը, Թուրքիայում ազգային եւ կրոնական փոքրամասնությունների խնդիրներին, ինչպես նաեւ՝ ժամանակակից մարտահրավերների լուծմանն ուղղված Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ջանքերին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

15 հունիսի **Նիդեռլանդների Թագավորության դեսպանին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Նիդեռլանդների Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Իոս Դաումային (նստավայրը՝ Թբիլիսի):

Հանդիպմանը Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների միջեւ առկա ջերմ կապերին ու զարգացող գործակցությանը՝ իր գնահատանքը հայտնելով նաեւ Նիդեռլանդների հայկական համայնքին ցուցաբերվող ուշադրության համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայ Եկեղեցու առաքելությանը, ինչպես նաեւ՝ միջեկեղեցական հարաբերություններին: Այս առիթով խոսվեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի՝ առաջիկայում Հայաստան կատարվելիք այցի մասին: Նորին Սրբությունը, դեսպանին ներկայացնելով այցի նշանակությունը, կարեւորեց մեր օրերում Եկեղեցիների գործակցությունը մարդկության առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում:

Վերջում Վեհափառ Հայրապետը դեսպան Դաումային մաղթեց առաքելության բարի արդյունավորում՝ երկու երկրների կապերի առավել սերտացման համար:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

16 հունիսի **Ս. Վլադիմիր ուղղափառ ճեմարանի տեսչին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ս. Վլադիմիր ուղղափառ ճեմարանի (ԱՄՆ) տեսուչ դոկտոր Ջոն քհն. Բեռին՝ ուղեկցությամբ Ս. Ներսես հայկական ընծայարանի տեսուչ (ԱՄՆ) Մարտիրոս ավագ քհն. Չեյանի:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանը:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակությամբ անդրադարձավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Ս. Վլադիմիր ուղղափառ ճեմարանի միջեւ ձեւավորվող կապերին՝ նշելով, որ դա երկուստեք նպաստելու է կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը եւ փորձի փոխանակմանը: Այս առումով Նորին Սրբությունը ողջունեց հունիսի 17-ին երկու ճեմարանների միջեւ համաձայնագիր կնքելու պատրաստակամությունը՝ վստահություն հայտնելով, որ սկզբնավորվող գործակցությունը մեծապես օգտակար կլինի թե՛ ուսանողների եւ թե՛ դասախոսական անձնակազմի համար:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Ս. Վլադիմիր ճեմարանի տեսչին՝ Ս. Ներսես հայկական ընծայարանի հետ ունեցած բազմամյա գործակցության համար՝ ընդգծելով, որ ընծայարանի բազում ուսանողներ, օգտվելով նաեւ Ս. Վլադիմիր ճեմարանի ընձեռած կրթական հնարավորություններից, այսօր իրենց հոգեւոր ծառայությունն են բերում Հայ Եկեղեցու անդաստանում:

Հայոց Հովվապետը հյուրերին նաեւ տեղեկություններ փոխանցեց քույր Եկեղեցիների բարձրագույն կրթական հաստատություններում հայ եկեղեցականների ուսումնառության վերաբերյալ:

Իր հերթին Ջոն քհն. Բեռն Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեց ճեմարանի գործունեությունը եւ կրթական այլ հաստատությունների հետ հաստատված սերտ հարաբերությունները: Վերջինս կարեւորեց ճեմարանների միջեւ իրականացվող համատեղ կրթական ծրագրերը եւ աշխարհի առջեւ ծառացած մարտահրավերների դիմագրավման գործում հատկապես ընդգծեց աստվածաբանական կրթության առաջնահերթությունը:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հայ Եկեղեցում հոգեւորականների պատրաստությանը եւ իրականացվելիք տարբեր հոգեւոր-կրթական ծրագրերին:

19 հունիսի **Բուշ-դյու-Ռոն նահանգային խորհրդի նախագահին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուշ-դյու-Ռոն նահանգային խորհրդի նախագահ Մարտին Վասալի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ «Բարձունք 5165» կազմակերպության նախագահ Ռոբերտ Ազիլազյանի (Ֆրանսիա):

Հանդիպմանը Նորին Սրբությունը, ողջունելով բարեկամ ժողովրդի զավակների այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին՝ գլխավորությամբ տիկին Վասալի, գոհունակությամբ նշեց նաեւ, որ հաճելի է պատվիրակության կազմում տեսնել նաեւ Մարսելում ապրող հայորդիների:

Վեհափառ Հայրապետը նախ անդրադարձ կատարեց Հայ Եկեղեցու պատմությանն ու Մայր Աթոռի առաքելությանն ազգային կյանքում, ինչպես նաեւ՝ դարերի ընթացքում Հայ Եկեղեցու ու հայ ժողովրդի առջեւ ծառացած բազում մարտահրավերներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեծապես կարեւորեց երկու ժողովուրդների միջեւ առկա ջերմ կապերը եւ Հայաստանի ու Ֆրանսիայի համակողմանի գործակցությունը: Հայոց Հովվապետը հավելեց, որ մեծագույն մխիթարություն է տեսնել հայ-ֆրանսիական բարեկամական կապերի զարգացումը՝ փոխայցելությունների եւ համատեղ տարբեր ձեռնարկների իրագործման միջոցով: Այս կապակցությամբ Նորին Սրբությունն ուրախությամբ փաստեց, որ դրանում մեծ դերակատարություն ունի Ֆրանսիայի հայկական համայնքը:

Իր գնահատանքը բերելով Ֆրանսիայի իշխանություններին ու բարեսեր ժողովրդին՝

Ֆրանսիայի հայկական համայնքի նկատմամբ մշտապես ցուցաբերվող հոգածու վերաբերմունքի համար՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդգծեց, որ Հայոց ցեղասպանության տարիներին բազում գաղթական հայորդիներ, Ֆրանսիայի ժողովրդի խաղաղասեր եւ հյուրընկալ ոգու շնորհիվ, կարողացան ապաստան գտնել երկրում եւ վերականգնել իրենց խաղաղ ու բարօր կյանքը:

Իր հերթին Նահանգային խորհրդի նախագահ Մարտին Վասալն Ամենայն Հայոց Հայրապետին ներկայացրեց պատվիրակության անդամներին: Շեշտելով Հայաստան եւ հայոց հոգեւոր կենտրոն կատարած իրենց այցի կարեւորությունը՝ նա վստահություն հայտնեց, որ այցը նպաստելու է երկու բարեկամական ժողովուրդների միջեւ հարաբերությունների առավել զորացմանն ու ամրապնդմանը տարբեր ոլորտներում: Նահանգային խորհրդի նախագահը ցավով անդրադարձավ նաեւ ԼՂՀ սահմանին վերջերս տեղ գտած ողբերգական իրադարձություններին՝ հույս հայտնելով, որ խաղաղությունը տարածաշրջանում կվերահաստատվի, ինչը երկրի զարգացման ու շենացման ամենաէական վավերապայմաններից է:

Վերջում Գարեգին Բ Հայրապետը նաեւ իր գնահատանքը հայտնեց ներկաներին՝ Մայր Աթոռի, Բուշ-դյու-Ռոն նահանգային խորհրդի եւ «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական կազմակերպության համատեղ ջանքերով Ս. Էջմիածնի տարածքում 10 տարի առաջ հիմնադրված «Էջմիածին 13» ֆրանսիական բարեգործական դիսպանսերատամնաբուժարանի արդյունավետ գործունեության համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ եղավ նաեւ Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի՝ առաջիկայում Հայաստան կատարվելիք այցին:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի փոխդիվանապետ Պարթեւ վրդ. Բարսեղյանը:

Պատվիրակությունը Մայր տաճարում նաեւ ներկա գտնվեց սբ Պատարագի արարողությանը:

22 հունիսի **Արգենտինայի Ազգային բանկի նախագահին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Արգենտինայի ազգային բանկի նախագահ Կառլոս Մելքոնյանին՝ ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Արթուր Ջավադյանի ուղեկցությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով հյուրերի այցը հայոց հոգեւոր կենտրոն, գոհունակություն հայտնեց Հայաստանի եւ Արգենտինայի միջեւ նաեւ բանկային ոլորտում ձեւավորված համագործակցության առիթով:

Նորին Սրբությունը գնահատանքով անդրադարձավ Արգենտինայի հայ համայնքի ազգային-հոգեւոր աշխույժ կյանքին եւ կազմակերպվածությանը: Այս կապակցությամբ Վեհափառ Հայրապետը, վերհիշելով Արգենտինա կատարած իր հովվապետական այցերը, մասնավորաբար ասաց. «Մենք հպարտ ենք արգենտինահայ մեր զավակներով, ովքեր կարեւոր ներդրում ունեն Արգենտինայի կյանքի առաջընթացի մեջ եւ երկրի հարգված ու սիրված քաղաքացիներն են»:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ տիար Կառլոս Մելքոնյանն իր ուրախությունը հայտնեց հայրենիք այցելության առիթով: Վերջինս Նորին Սրբությանը փոխանցեց նաեւ Արգենտինայի նախագահ Մաուրիսիո Մակրիի բարեմաղթանքներն ու ողջույնները:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի՝ Հայաստան կատարելիք առաջիկա այցին:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց «Էջմիածին 13» դիսպանսերի 10-ամյակին նվիրված միջոցառմանը

Հունիսի 19-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներկա գտնվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում Մայր Աթոռի, Բուշ-դյու-Ռոն նահանգի վարչական խորհրդի նախագահ Ժան-Նոել Գերինիի եւ «Բարձունք 5165» ֆրանսահայ բարեգործական կազմակերպության համատեղ ջանքերով հիմնադրված «Էջմիածին 13» ֆրանսիական դիսպանսերի 10-ամյակին նվիրված միջոցառմանը:

Դիսպանսերը, որ գործում է «Բարձունք 5165» ֆրանսահայ կազմակերպության (Մարսել) հովանավորությամբ, անվճար սպասարկում է Էջմիածին քաղաքի եւ շրջակայքի բնակչությանը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանը, ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպան Ժան-Ֆրանսուա Շարպանտիեն, Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Բուշ-դյու-Ռոն նահանգային խորհրդի նախագահ Մարտին Վասալի գլխավորած պատվիրակությունը, «Բարձունք 5165» բարեգործական կազմակերպության նախագահ Ռոբերտ Ազիլազյանը եւ այլ հրավիրյալներ:

Արարողությունը բացվեց միասնական՝ Տերունական աղոթքով, դպրոցականների կողմից կատարվեցին Հայաստանի Հանրապետության եւ Ֆրանսիայի Հանրապետության օրհներգերը:

Ապա բացման խոսքով հանդես եկավ «Էջմիածին 13» ֆրանսիական դիսպանսերի գլխավոր տնօրեն Լուսինե Մելիքյանը՝ ներկայացնելով դիսպանսերի հիմնադրման պատմությունը եւ 10-ամյա գործունեությունը:

Այս առիթով իր ուրախությունն արտահայտեց նաեւ Բուշ-դյու-Ռոն նահանգային խորհրդի նախագահը՝ կարեւորելով այն արդյունաշատ աշխատանքը, որ համատեղ ջանքերով իրականացվել է, ինչը որակեց իբրեւ միջազգային ու միջպետական համագործակցության անհերքելի գրավական: Մասնավոր կերպով ընդգծելով Հայ Եկեղեցու հանձնառությունն այս ծրագրում՝ նա շեշտեց, որ առանց Հայ Եկեղեցու եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հովանավորության՝ ծրագիրը գոյություն չէր ունենա, եւ չէին արձանագրվի այսքան մեծ հաջողություններ:

10-ամյա հոբելյանի կապակցությամբ ելույթ ունեցավ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը: Վերջինս առանձնացրեց դիսպանսերի՝ դպրոցականներին, հաշմանդամություն ունեցող երեխաներին ու սոցիալապես խոցելի խավին բերած վիթխարի օգտակարությունը եւ գորակցությունը:

Արարողությունն ամփոփվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքով եւ հայրապետական պատգամով: Ողջունելով միջոցառման մասնակիցներին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ դա յուրօրինակ գնահատականն է «Բարձունք 5165» բարեգործական կազմակերպության «Էջմիածին 13» ֆրանսիական դիսպանսերի 10-ամյա գործունեության:

Ի նշանավորումն Վաղարշապատի եւ Մարսելի միջեւ հաստատված բարեկամության՝ Մայր Աթոռի հովանու ներքո բացված ատամնաբուժական կենտրոնի 10-ամյա գործունեության առիթով Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց Բուշ-դյու-Ռոն նահանգային խորհրդի անդամներին եւ «Բարձունք 5165»-ի նախագահին՝ իրենց հանձնառության եւ կազմակերպության հովանավորությունը շարունակելու պատրաստակամության համար: Նորին Սրբությունը մասնավորապես հավելեց. *«Յուրաքանչյուր անձ, որ մուտք է գործում այս հաստատություն, հաղորդ է դառնում այն ջերմ բարեկամության պատմությանը, որ դարեր շարունակ ձեւավորվել է մեր երկու ժողովուրդների եւ երկրների միջեւ: Հատկապես Հայաստանի անկախացումից հետո մեր ժողովուրդն առավել չափով զգացել է Ֆրանսիայի իշխանությունների եւ ժողովրդի ցուցաբերած գորակցությունը մեր հայրենիքին, ի մասնավորի՝ դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում՝ որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր, եւ նաեւ Հայոց ցեղասպանության դատապարտման գործում, որպեսզի նման ողբերգություններ երբեք եւ ոչ մի ժողովրդի կյանքում տեղ չգտնեն:*

Մենք փառք ենք տալիս Աստծուն, որ այսպիսի գեղեցիկ համագործակցություն է առկա մեր երկու երկրների ու ժողովուրդների միջեւ»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մաղթելով, որ Տերն արգասավորի այդ բարեկամությունն ու համագործակցությունը, նաեւ իր գնահատանքը բերեց հաստատության աշխատակիցներին՝ իրենց նվիրյալ ծառայության համար:

Վերջում տեղի ունեցավ շրջայց ֆրանսիական դիսպանսերում, ցուցադրվեց 10-ամյա գործունեությանը նվիրված ֆիլմ:

Հռոմի Սրբազան Քահանայապետ

Սկիզբը՝ էջ 3

Ուրախություն է Մեզ համար աղոթակից լինել Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի մեծ բարեկամիդ մատուցած Պատարագին:

Գյումրին Հայաստանի պատմական այն քաղաքներից է, որտեղ ծաղկում են ապրել հայ քրիստոնեական դարավոր արժեքները, ներդաշնակությամբ ձուլվել մեր ժողովրդի պատմությունն ու մշակույթը եւ հյուրընկալության սիրառատ ոգին: Գյումրիի ժողովուրդն առանձնանում է խորին հավատքով եւ եկեղեցասիրությամբ, կրողն է նաեւ քրիստոնեական եղբայրական համակեցության գեղեցիկ ավանդույթի, որի վկայությունն է այսօր այստեղ աղոթքի կանգնած Հայ Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների եւ քրիստոնեական այլ հարանվանությունների հավատացյալ զավակների ներկայությունը: Խորհրդային աստվածմերժության տարիներին, երբ Հայաստանում կործանվում եւ փակվում էին եկեղեցիները, եւ միայն հավատացյալ մեր ժողովրդի անտեղիտալի դիմադրության շնորհիվ բաց էին մնացել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ սակավ եկեղեցիներ, Գյումրիի Սուրբ Աստվածածին (Յոթվերք) եկեղեցին իր մայրական գիրկը բացեց եւ հովանի ու աղոթավայր դարձավ Հայաստանի հյուսիսային շրջանների եւ Վրաստանի սահմանամերձ հայաբնակ քաղաքների ու գյուղերի բոլոր քրիստոնյաների համար՝ անկախ ազգային ու դավանական պատկանելությունից՝ լինեին նրանք հայ առաքելական, կաթոլիկ թե օրթոդոքս: Եկեղեցու հյուսիսային նախամուտքը վերածվեց կաթոլիկ հավատացյալների աղոթավայրի, ուր տեղադրվեց եւ առ այսօր պահպանվում է կաթոլիկ ավանդույթին բնորոշ Տիրոջ խաչելության արձանը՝ բերված Արեւիկ գյուղի կաթոլիկ եկեղեցուց, իսկ հարավային նախամուտքը տրամադրվեց ուղղափառներին, որտեղ ամենապատվավոր տեղում բարձրացվեց սուրբ Նիկողայոս Սքանչելագործի ռուսական սրբապատկերը: Այսպես Գյումրին եւ Սուրբ Աստվածածին (Յոթվերք) եկեղեցին էկումենիզմի ժամանակակից սահմանումից տարիներ առաջ դարձան գործնական էկումենիզմի մատակարարն ու քարոզիչը:

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, քաղաքը, որտեղ մենք այսօր գտնվում ենք, հյուրընկալ ու ջերմ իր սրտի վրա կրում է նաեւ կնիքը տառապանքի: Քսաներորդ դարասկզբին, երբ մեր ժողովուրդը ցեղասպանության էր ենթարկվում, Գյումրին նույնպես զգաց Օսմանյան կայսրության ջարդարար եւ զավթողական քաղաքականության ծանր հարվածները եւ այսօր էլ կանգնած է փակ սահմանի դիմաց՝ իբրեւ հարյուր տարի առաջ Թուրքիայի կողմից իրագործված ցեղասպանության եւ շարունակվող ժխտողական քաղաքականության վկա:

Մեր ժողովրդի զավակները Գյումրիում հավատքով ու քաջարի ոգով դիմագրավեցին նաեւ երկրաշարժի աղետը: Այս առիթով, ի դեմս Ձերդ Սրբության, երախտագիտության Մեր խոսքն ենք ուղղում Կաթոլիկ Եկեղեցուն, որը ծանր այդ օրերին նույնպես եղբայրսիրությամբ օգնության ձեռք մեկնեց երկրաշարժից տուժածներին՝ համաձայն առաքյալի խոսքի. «Հոգ տանենք միմեանց՝ սիրոյ եւ բարի գործերի յորդորելով» (Եբր. Ժ 23-24): Այսօր էլ գյումրեցի մեր զավակները շարունակում են հաղթահարել դժվարությունները եւ նվիրյալ ջանքեր բերում՝ բարօր ու զարգացող կյանքով բարեշեն դարձնելու Գյումրին, որի վկայությունն են վերջին տարիներին կառուցված կաթոլիկ եկեղեցին, այս հրապարակին հովանի պատմական երկու նորոգված եկեղեցիները՝ իբրեւ Գյումրիի հառնող կյանքի խորհրդանիշերը:

Գոհություն հայտնելով Տիրոջը Գյումրիում Մեր սիրեցյալ եղբոր՝ Ֆրանցիսկոս Պապի հետ միասնական աղոթքի այս շնորհառատ օրվա համար՝ Մեր հորդորն ու մաղթանքն ենք բերում ձեզ, սիրելի՛ հավատացյալներ, հավատքի, եղբայրսիրության ու հույսի աներեր քայլերով վկայելու այս աշխարհում Քրիստոսի պատգամը. «Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց. ինչպէս Ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեանց սիրեցէք» (Հովհ. ԺԳ 34):

Այս մաղթանքով նաեւ ողջունում եւ Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Գյումրիի եւ մարզի իշխանավորներին, Շիրակի հավատավոր Մեր զավակներին: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանին, նրան լծակից հոգեւորականներին եւ հայ կաթոլիկ համայնքի եկեղեցականներին՝ առաջնորդ Ռաֆայել արք. Մինասյանի գլխավորությամբ: Մաղթում ենք, որ Տիրոջ զորակցությամբ նրանք շարունակեն արդյունավորել իրենց հավատավոր հոտի խնամքն ու հովվությունը եւ եղբայրսիրությամբ գործակցությունը:

Սուրբ առաքյալների եւ Տիրոջ բոլոր վկաների բարեխոսության հայցով աղոթք ենք բարձրացնում առ ամենակալն Աստված՝ աշխարհի խաղաղության, մարդկության բարօր ու ապահով կյանքի եւ Քրիստոսի Սուրբ Եկեղեցու պայծառության համար:

Ձե՜րդ Սրբություն, սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, Ձեր այցելությունը Գյումրի հոգեւոր նորոգություն է Շիրակի տարածաշրջանի հավատացյալներին եւ միշտ պիտի հիշվի սիրով ու ջերմությամբ: Ուրախ սրտով վերստին հաստատում ենք, որ Ձեր այցը նոր վկայություն է մեր Եկեղեցիների բարի հարաբերությունների: Թող Աստված ամուր պահի եղբայրությունը եւ արգասավորի գործակցությունը մեր Եկեղեցիների այսօր եւ միշտ: Ամեն»:

Ս. Պատարագի ընթացքում օրվա խորհրդի շուրջ քարոզեց Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապը:

«Կվերակառուցեն հին ավերակները, կվերանորոգեն անբնակ քաղաքները» (Ես. 61. 4):



Այս վայրերում, սիրելի՜ եղբայրներ եւ քույրեր, իրականացել են Եսայի մարգարեի խոսքերը, որոնք լսեցինք: Անաստվածության երկար տարիների հոգեւոր կործանումից հետո, երկրաշարժի սարսափելի նյութական ավերածություններից հետո այսօր գտնվում ենք այստեղ՝ Աստծուն շնորհակալություն հայտնելու, հավատը դավանելու ազատության եւ առատաձեռնության համար, որ բազում մարդկանց օգնեց վերականգնելու համար իրենց կյանքը հսկայական դժվարություններով հանդերձ: Սույն վերածննդյան նշաններից ուզում եմ հիշեցնել Աշոցքի հիվանդանոցը 25 տարի առաջ եւ ճանաչված որպես «Պապի հիվանդանոց»՝ ծնված Սուրբ Հովհաննես Բ-ի սրտից, որ սրտանց փափագել էր, շարունակում է մնալ որպես շատ կարեւոր եւ տառապյալներին մոտ ներկայություն, սիրո նշան, որ տեղական կաթողիկե հասարակության եւ կրոնավորական միաբանությունների կատարած գործունեությունների հետ գերազանցորեն ուսուցողական է:

Արդարեւ, սեր է՝ Աստծուց ստացած եւ ընկերոջ ընծայված սերն է,- ինչպես վկայում է օրինակի համար Կալկաթայի երանելի Մայր Թերեզան,- ժայռը, որի վրա կառուցել է եւ վերակառուցել մեր ապագան: Այս հիմքի վրա է, որ հաստատված է Հիսուսի աշակերտի կյանքը, սիրո միջոցով է, որ Եկեղեցու դեմքը երիտասարդանում եւ հմայիչ է դառնում: Գթառատ եւ թանձրացյալ սերը քրիստոնյայի այցեքարտն է ներկայանալու այլ կերպեր, կարող են շեղիչ եւ նույնիսկ անօգուտ լինել, որովհետեւ Հիսուս ասում է. «Սրանից բոլորն իմանում են, որ Իմ աշակերտներն եք, եթե սիրեք իրար» (Հովհ. 13. 35): Կոչված ենք միշտ կառուցելու եւ վերակառուցելու հաղորդությունն առանց երբեք հոգնելու, կամուրջներ սարքելու, ոչ թե պարիսպներ կամ բաժանարար պատնեշներ: Հայ ժողովուրդը միշտ ավելի միացած լինի հավատի եւ սիրո մեջ, եւ հավատացյալները լավագույն օրինակը կարողանան տալ՝ համագործակցելով միմյանց հետ, փոխադարձ հարգանքով եւ երկխոսությամբ՝ իմանալով, որ «միակ մրցույթը, որ հնարավոր է Տիրոջ աշակերտների միջեւ՝ ստուգելն է, թե ով է ի վիճակի առավել մեծ սեր նվիրելու» (Հովհաննես Պողոս Բ, Քարոզ, 27 սեպտեմբեր, 2001. Ուսուցումներ ԻԴ, 2 [2001], 478):

Աստված բնակվում է սիրողի մեջ, Աստված բնակվում է, որտեղ սիրում են իրար, հատկապես որտեղ տկարներին եւ աղքատներին են խնամում: Նա միշտ օրհնում եւ պաշտպանում է նրան, ով «բարի լուրն է տանում թշվառներին, կոտրված սրտի վերքերն է պատում եւ մխիթարում է վշտացածներին» (հմմտ. 1-2 համարները): Շատ կարիքն ունենք սրան: Կարիքն ունենք քրիստոնյաների, հոգնությունից չխորտակվեն եւ չհուսալքվեն փոխադարձ անհասկացողությունից, այլ բացվեն Աստծո սիրո ծրագրերին: Բարի կամքով մարդկանց կարիքը կա, որ գործնականում եւ ոչ թե խոսքերով օգնեն դժվարության մեջ գտնվող եղբայրներին եւ քույրերին: Կարիքը կա ավելի արդար հասարակության, որտեղ յուրաքանչյուրը կկարողանա արժանավայել կյանք վարել եւ արդարորեն հատուցվող աշխատանք:

Եկել եմ որպես ուխտավոր այս օրհնյալ երկիրը՝ հանդիպելու ձեզ հետ, որ ժամանել եք տարբեր շրջաններից եւ մոտակա Վրաստանից: Տեսնում եմ, որ Աստված ձեզ մենակ չի թողել. Նա այցելել է ձեր ժողովրդին (հմմտ. Ղուկ. 1. 68), Աստված հիշեց ձեր հավատարմությունը Ավետարանի ձեր հավատի անդրանկության՝ հիմնված առաքյալների քարոզության վրա, որոնց հիշատակն եք տոնում այսօր: Այս հողի վրա, հուսկ, ձեր սրբերից եւ վարդապետներից ոմանք ստեղծեցին այբուբենը ժողովրդի համար, եւ ժողովուրդն Ավետարանի պատգամը քարոզեց, բոլորը միասին վկայելով, նույնիսկ արյան եւ ծանր փորձությունների գնով, որ «Աստծո սերը կյանքից ավելի արժե» (հմմտ. Սղ. 63. 4): Քրիստոնեական հավատն այսպես դարձավ հայ ժողովրդի շունչը եւ նրա պատմության սիրտը: Այն ձեր ապագայի հույսն է նաեւ:

Սակայն միշտ առկա է փորձությունը՝ հավատը վերածելու անցյալի պատկանող գեղեցիկ մի բանի, կարծես լիներ սքանչելի մանրանկարված մի մատյան՝ թանգարանում պահելիք: Սակայն եթե պատմության դիվաններում պահվի, հավատը կորցնում է հաղորդակցական ուժը, կենսունակ եւ փոխակերպող իր գեղեցկությունը, բոլորի հանդեպ իր դրական բացվածքը: Մինչդեռ հավատը ծնվում եւ վերածնվում է Տիրոջ՝ Հիսուսի հետ կենդանի հանդիպումից, իր փրկող եւ կյանքի բոլոր պարագաներում լուսավորող գթասրտության փորձառությամբ: Օգտակար է ամեն օր վերանորոգել այս հանդիպումը, Աստծո Խոսքի ընթերցումով եւ աղոթքով բացվելով իր սիրուն, որ երջանկությունն է սնուցում: Իսկ երբ Հիսուս կանչի հետեւելու Իրեն, հատկապես երբ ձեզ՝ երիտասարդներիդ, հրավիրի, մի՜ տատամսեք քաջությամբ պատասխանելու նրան «այո՛»: Նա մեզ ճանաչում է, մեզ իսկապես սիրում է եւ ուզում է ազատել սիրտը վախի եւ հպարտության ծանրություններից: Նրան տեղ տալով՝ կարող ենք սեր ճառագայթել եւ Ավետարանը քարոզել: Այսպես կարողանալու եք ձեր ավետարանող մեծ պատմության սկիզբ տալ, որին Եկեղեցին եւ աշխարհը կարիքն ունեն այս նեղության ժամանակներում, որ միաժամանակ նաեւ ողորմության ժամանակներ են:

Հենց անցած տարվա աստվածային ողորմության կիրակի օրվա ծիսակատարությամբ, որին մասնակցեց իմ սիրելի եղբայրը՝ Գարեգինը, որին շնորհակալություն եմ հայտնում ինձ ազնվորեն ընդունելու համար եւ իր ներկայությամբ եւ խոսքով մեզ պատվեց, ուզեցի բոլորի ուշադրությանը հանձնել Գրիգոր Նարեկացու կերպարը՝ Ընդհանրական Եկեղեցու Վարդապետ: Նա կարապետ եւ մարգարեն էր աստվածային ողորմության: Դժվար է գտնել որեւէ մեկին, որ հավասարվի նրան՝ քննելու անդնդային թշվառությունները, որ կարող են մարդկային սրտում տնավորվել. սակայն նա վերածում է դրանք աստվածային սիրո անդադրուն, արտասվալի եւ վստահ պաղատանքի՝ հաստատելով, որ Աստված «պարգեւների բաշխողն է, բնությամբ բարի […], մխիթարության ձայն, քաջալերանքի լուր, ուրախության թռիչք, […] անհամեմատելի քնքշություն, հորդառատ ողորմություն, […] փրկարար համբույր» (Մատյան ողբերգության, 3,1)՝ հայտարարելով, որ «երբեք բարկության խավարից չի մթագնել նրա ողորմության լույսը» (նույն, 16, 1): Նարեկացին ոչ միայն վարդապետ է ուսուցման, այլ հատկապես կյանքի, որովհետեւ սովորեցնում է, թե ինչքան կարեւոր է ճանաչել մենք մեզ ողորմության կարոտ, եւ մեր թշվառությունների եւ վերքերի առաջ, բացվել Տիրոջ, «Աստված մերձավոր, բարության փափկություն» (նույն, 17,2), «սիրով լի մարդկանց նկատմամբ, […] հուր, որ մեղքի խռյուն է սպառում» (նույն 16, 2): Այս սուրբ վկան մարգարեաբար ներկայացնում է ձեր ժողովրդին, որ պատմության ընթացքում մեկնաբանել է շատ անգամ ողբերգական սեփական դեպքերը՝ նրա գրությունների լույսի տակ: Նա, սակայն, Ընդհանրական Եկեղեցու Վարդապետ է արդեն. ձեր սիրելի ժողովուրդը եւս, տառապելու քաջատեղյակ եւ հարության զորությամբ, կարողանա հավատի վկա եւ վարդապետ լինել մեզ բոլորիս:

Աստվածամոր բարեխոսությամբ, Թագուհի եւ «ցնծություն մեր տառապյալ բնության» (Շարակնոց, Ավետման կանոն), խնդրում եմ, սուրբ Գրիգորի խոսքերով իսկ, աստվածային ողորմությունը եւ սիրելուց երբեք չհոգնելու պարգեւը. Սուրբ Հոգի «հզոր պաշտպան, բարեխոս եւ խաղաղարար, քեզ ենք ուղղում մեր աղաչանքները: […] Պարգեւիր մեզ շնորհը՝ սիրո եւ բարի գործերի քաջալերման […] Հոգի քաղցրության, գթության, մարդասիրության եւ ողորմության, […] ողորմյա՛ մեզ, Տե՛ր Աստված մեր, ըստ մեծի ողորմության քում» (Շարական Պենտեկոստեի)»:

Ս. Պատարագի ընթացքում երկու Հովվապետերը միմյանց ողջույն տվեցին, որն ապա փոխանցվեց ներկաներին:

Շնորհակալական ուղերձով վերջում հանդես եկավ Հայաստանի, Վրաստանի,

Ֆրանցիսկոս Պապի այցը Հայաստան

Ռուսաստանի եւ Արեւելյան Եվրոպայի հայ կաթոլիկների առաջնորդ Ռաֆայել արք. Մինասյանը:

Ս. Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հռոմի Սրբազան Քահանայապետը պապամոբիլով շրջեցին հրապարակում՝ իրենց օրհնությունը բաշխելով ներկաներին:

Ապա Հռոմի Ֆրանցիսկոս Պապը մեկնեց Անարատ Հղության քույրերի մենաստան:

Նույն օրը Ֆրանցիսկոս Պապն այցելեց Շիրակի թեմի Ս. Աստվածածին (Յոթվերք) առաջնորդանիստ եկեղեցի, ուր նրան դիմավորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպս Աջապահյանի եւ այս առիթով Գյումրի ժամանած Շիրակի, Արթիկի, Գուգարաց, Արագածոտնի թեմերի եկեղեցականների հետ: Թափորով երկու Հովվապետերը, զանգերի ղողանջների ուղեկցությամբ, մուտք գործեցին եկեղեցի, ուր «Ուրախ լեր» շարականի ներքո առաջացան դեպի ատյան: Եկեղեցու ավագ Խորանին դրված Աստվածածնի Յոթ վերք սրբապատկերի առջեւ Վեհափառ Հայրապետը եւ Հռոմի Պապն առանձնական աղոթք ասացին, որից հետո Ֆրանցիսկոս Պապն օրհնեց ներկա ժողովրդին:

Այնուհետեւ Շիրակի թեմի առաջնորդը ողջունեց երկու Հովվապետերին՝ նշելով. «*Անհուն ցնծությամբ եւ մեծ ուրախությամբ ողջունում ենք Ձեզ պատմական Գյումրի քաղաքի սքանչելի մայր տաճարում, որ կրում է մեր բոլորի մոր՝ Ս. Աստվածածնի անունը, որը սակայն ավելի հայտնի է իր ժողովրդական Ս. Յոթվերք անվանումով՝ այստեղ պահվող հրաշագործ սրբապատկերի շնորհիվ, որը շատ ավելի հին է, քան ինքը՝ եկեղեցին, եւ որը, կիսելով հայ ժողովրդի ճակատագիրը, դարավոր թափառումներից հետո ի վերջո հանգրվանել է այստեղ: Այս վեհաշուք եկեղեցին ի սկզբանե կառուցվել է հենց այս սրբապատկերի պահպանության համար՝ ԺԹ դարի վերջին, եւ այս հարյուր երեսուն տարվա ընթացքում տեսել եւ հաղթահարել է մարտնչող անաստվածության յոթանասուն տարիները, երկու թուրքական ներխուժում եւ դարձյալ երկու սոսկալի երկրաշարժ: Սակայն, հակառակ իրեն բաժին հասած ծանրագույն փորձություններին, Աստվածամոր բարեխոսությամբ եւ մեր ժողովրդի հերոսությամբ այս մայր եկեղեցին բոլոր այդ տարիներին եղել եւ մնացել է անլռելի եւ անընդմիջելի աղոթքի վայր՝ քաղաքի եւ շրջակայքի բոլոր քրիստոնյաների, անգամ ոչ քրիստոնյաների համար: Այսօր էլ մեր մայր տաճարը, իր մայրական գիրկը բացած քաղաքում առկա բոլոր հարանվանությունների առաջ, շարունակում է լինել գործնական միության եւ սիրո երաշխիքն ու գրավականը*»:

Այցի առիթով Միքայել սրբազանը թեմի հավատացյալների անունից Ֆրանցիսկոս Պապին եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հանձնեց Աստվածածնի Յոթ վերք սրբապատկերի կրկնօրինակները, որից հետո երկու Հովվապետերը քայլեցին դեպի եկեղեցու ներսում գտնվող Խաչելության խորանը, ուր երկրպագություն կատարեցին սբ խաչի առջեւ:

Եկեղեցու մուտքի առջեւ երկու Հովվապետերն իրենց օրհնությունը բաշխեցին նաեւ հաշմանդամ երեխաներին:

Այնուհետեւ Նորին Սրբությունը եւ Հռոմի Սրբազան Քահանայապետն այցելեցին նաեւ Գյումրիի հայ կաթոլիկ առաջնորդանիստ Սրբոց Նահատակաց եկեղեցի: Եկեղեցու առջեւ նրանց դիմավորեցին Ռաֆայել արք. Մինասյանը, եկեղեցականներ եւ հայ կաթոլիկ համայնքի ներկայացուցիչներ:

Երկու Հովվապետերի առանձնական աղոթքից հետո Ամենայն Հայոց Հայրապետը Պահպանիչ աղոթքով օրհնեց հայ կաթոլիկ համայնքի ներկայացուցիչներին եւ հաշմանդամ երեխաների:

Դուրս գալով Սրբոց Նահատակաց եկեղեցուց՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հռոմի Սրբազան Քահանայապետը, հրաժեշտ տալով Գյումրիին, վերադարձան Երեւան:

❖❖❖

Հունիսի 25-ի երեկոյան, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի, Հանրապետության հրապարակում տեղի ունեցավ էկումենիկ արարողություն եւ խաղաղության աղոթք, որին ներկա էին տասնյակ հազարավոր հայորդիներ եւ հյուրեր տարբեր երկրներից:

Արարողությանը ներկա էին նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, ԱԺ պատգամավորներ, կառավարության անդամներ եւ դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ:

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Ֆրանցիսկոս Պապի մուտքը Հանրապետության հրապարակ ազդարարվեց Երեւանի եկեղեցիների զանգերի ղողանջներով: Երկու Հովվապետերը յուրաքանչյուր եկեղեցուց 12 բարձրաստիճան հոգեւորականներով բարձրացան արարողության համար հատուկ պատրաստված բեմ: Արարողության ընթացքում Հայ Եկեղեցու հոգեւոր դասից Ամենայն Հայոց Կաթողիկոսին աղոթակից էին Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչ, Բերիո թեմի առաջնորդ Շահան արք. Սարգիսյանը, Իրաքի հայոց թեմի առաջնորդ Ավագ արք. Ասատուրյանը, Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանը, Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Մովսես եպս Մովսիսյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպս Միրզախանյանը, Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Աշոտ եպս Մնացականյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Մարկոս եպս Հովհաննիսյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպս Պռոշյանը, Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանը, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպս Նաջարյանը:

Համատեղ աղոթքի ժամանակ ընթերցվեցին հատվածներ Ս. Գրքից եւ աղոթքներ, ինչպես նաեւ երգվեց Ս. Հարության շարական:

Արարողության ընթացքում ներկաներին իր ուղերձն ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

«Երանի՛ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծու որդիներ պիտի կոչուեն» (Մատթ. Ե 9):

Ձե՛րդ Սրբություն, սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս,

Մեծարգո նախագահ Հայաստանի Հանրապետության,

Շնորհազա՛րդ հոգեւոր եղբայրներ եւ սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Բարձրյալն Աստծո սուրբ անվան փառաբանությունը մեր շուրթերին՝ այսօր քաղաքամայր Երեւանի կենտրոնում՝ բիբլիական Արարատի

օրհնաբեր հայացքի ներքո, համախմբվել ենք միասնական աղոթքի: Նոյի երկրից, որտեղ Աստված ծագեցրեց խաղաղության ծիածանը, մեր հայցը բարձրացրեցինք երկինք ի Քրիստոս սիրեցյալ Մեր եղբոր՝ Ֆրանցիսկոս Պապի հետ՝ հանուն աշխարհում խաղաղության հաստատման եւ մարդկության ապահով ու բարօր կյանքի: Հուզումով ենք անդրադառնում, որ այս հրապարակում մեզ աղոթակից են նաեւ պատերազմներից, ահաբեկչություններից ու բռնություններից տուժածներ, փախստականներ Ադրբեջանից, փախստականներ Սիրիայից, Իրաքից, ովքեր առ Աստված հույսով սպասում են խաղաղության օրերին իրենց հայրենի բնակավայրերում:

Արդարեւ, մեկ եւ կես տասնամյակ առաջ երրորդ հազարամյակը դիմավորում էինք հույսով, որ այն մարդկության կյանքում սկիզբ պիտի առնի ազգերի համերաշխ գոյակցությամբ եւ պետությունների բարի գործակցությամբ՝ հանուն խաղաղ ու արդար աշխարհի կառուցման: Մինչդեռ ամենօրյա իրականությունը հաճախ գուժում է պատերազմական եւ ահաբեկչական նորանոր գործողությունների, մարդկային անասելի տառապանքների, անդառնալի կորուստների մասին: Աշխարհի տարբեր կողմերում տարբեր ազգերի, կրոնների ու դավանանքների պատկանող մանուկներ ու պատանիներ, կանայք ու տարեցներ մահափյուռ զենքերի եւ վայրագ բռնարարքների զոհ են դառնում կամ բռնում գաղթականության ուղին՝ ահռելի դժվարություններ հաղթահարելով կյանքի ապահովություն գտնելու համար:

Ճիշտ մեկ դար առաջ այս նույն ճանապարհն էր անցում մեր ժողովուրդը՝ հայտնվելով ծանրագույն իրավիճակի առջեւ, երբ Ցեղասպանության հետեւանքով կորցրել էր հայրենիքի մեծագույն մասը եւ, ունենալով մեկ ու կես միլիոն անմեղ նահատակներ, պայքարում էր իր գոյության իրավունքի համար: Այսօր էլ մեր ժողովուրդն ապրում է չհայտարարված պատերազմի դժվարին պայմաններում՝ թանկ գնով պաշտպանելով խաղաղությունը մեր երկրի սահմաններում, Լեռնային Ղարաբաղի մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքը՝ իր բնօրրան հայրենիքում: Մեր ժողովրդի խաղաղասիրական ձգտումներին ի պատասխան՝ Ադրբեջանը, խախտելով հրադադարը, ապրիլ ամսին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմաններին սանձազերծեց ռազմական գործողություններ: Հրետակոծվեցին եւ ավերվեցին հայկական բնակավայրեր, զոհվեցին ու վիրավորվեցին խաղաղության պաշտպան զինվորներ, դպրոցահասակ երեխաներ, խոշտանգվեցին խաղաղ, անզեն բնակիչներ:

Այս դժվարություններին հանդիման՝ մեր ժողովուրդն ապրում է ցավը նաեւ այն ավերածությունների եւ կորուստների համար, որ շարունակվում են Մերձավոր Արեւելքում, սոսկալի ահաբեկչությունների համար, որ իրագործվեցին եվրոպական խոշոր քաղաքներում, Ռուսաստանում, Միացյալ Նահանգներում, Ասիայի եւ Աֆրիկայի երկրներում, հոգեւոր ու մշակութային այն արժեքների համար, որ անխնա կերպով ոչնչացվում են հակամարտությունների տարածաշրջաններում: Որքա՜ն սրբավայրեր պղծվեցին, եւ արժեքավոր կոթողներ կործանվեցին Սիրիայում, Իրաքում, Արեւելքի եւ Աֆրիկայի երկրներում, որքա՜ն խաչքարեր ոչնչացվեցին Ադրբեջանում: Փլատակների, կորստի ցավի ու կարիքի մեջ փլուզվում են նաեւ մարդկային հոգու արժեքներն ու զգացումները:

Ստեղծված իրավիճակներում քրիստոնեական Եկեղեցիների եւ կրոնական առաջնորդների առաքելությունը չի կարող սահմանափակվել միայն տուժածներին աջակցելով, մխիթարելով եւ հովվական հոգատարություն ցուցաբերելով: Խաղաղության փնտրտուքի ճանապարհին առավել գործուն քայլեր պիտի ձեռնարկվեն՝ ջանքերը համատեղելով կանխարգելելու համար չարիքը, միջեկեղեցական ու միջկրոնական գործակցությամբ հասարակությունների մեջ գորացնելու սիրո, համերաշխության ու համագործակցության ոգին՝ ըստ Աստծո կոչի. «Երանի՛ խաղաղարարներին,- ասում է մեր Տերը,- որովհետեւ նրանք Աստծու որդիներ պիտի կոչուեն»:

Ձերդ Սրբություն, հովվական Ձեր ծառայությունը ակնհայտորեն արտահայտում է աշխարհի խաղաղության ու ազգերի միջեւ հաշտության տերունավանդ պատգամին Ձեր ամբողջական նվիրվածությունը, որի վկայություններից մեկը եղավ նաեւ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով անցյալ տարի Վատիկանի Սուրբ Պետրոս տաճարում մատուցված Պատարագը՝ ի հիշատակ մեր անմեղ նահատակների, երբ Դուք Ձեր պատգամում բարձրաձայնեցիք արդարության վերականգնման անհրաժեշտության մասին՝ նշելով. «Չարիքը թաքցնելը կամ ուրանալը նման է թույլ տալուն, որ վերքն արյունահոսի՝ առանց վիրակապվելու»:

Այս նույն սկզբունքով առաջնորդված՝ վերջին մեկ տարում Հայոց ցեղասպանությունը վճռականորեն դատապարտեցին նաեւ նոր պետություններ ու կազմակերպություններ, օրերս՝ նաեւ Գերմանիան, որն Առաջին

Հռոմի Սրբազան Քահանայապետ

համաշխարհային պատերազմում Թուրքիայի դաշնակիցն էր: Մեր ժողովուրդը երախտագետ է Ձերդ Սրբությանը եւ բոլորին, ովքեր բարձրաձայնում ու պաշտպանում են արդարությունը, եւ ակնկալում է, որ Թուրքիան՝ ունկնդիր Ձեր պատգամին եւ բազում պետությունների ու միջազգային կառույցների կոչին, քաջություն դրսեւորի առերեսվելու պատմությանը, վերացնի Հայաստանի անօրինական շրջափակումը, դադարեցնի նաեւ զորակցությունը Ադրբեջանի ռազմական խարդավանքներին՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ու խաղաղ ապրելու իրավունքի դեմ: Արդարեւ, խաղաղությունը չի կարող կենսագործվել առանց արդարության, մարդկային կյանքերը չեն կարող դառնալ շահարկումների առարկա, չեն կարող անտեսվել: «Աստծու կողմից աչառութիւն չկայ,- ասում է առաքյալը,- այլ՝ բոլոր ազգերի մէջ ով երկնչում է Նրանից եւ արդարութիւն է գործում, ընդունելի է Նրան» (Գործք Ժ 34-35): Միայն արդարությունը, որի վրա հիմնված է մարդկանց եւ ժողովուրդների իրավունքների պաշտպանությունը, կարող է դառնալ ամուր հիմքը մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման եւ ամենահրական ուղին հակամարտությունների համապարփակ լուծման:

Այս նպատակի իրագործման համար ջերմեռանդ սրտով աղաչում ենք Աստծուն, որպեսզի ուունկնդիր լինի մեր աղոթքներին եւ Սուրբ Հոգու շնորհների առատ հեղմամբ բարի արդյունքներով արգասավորի եղբայրական սերն ու գործակցությունը Եկեղեցիների: Թող Ողորմած մեր Տերը մաքրի աշխարհը չարի ոդբերգություններից եւ պարգեւի խաղաղություն ու ապահովություն: Եվ թող մարգարեական խոսքի համաձայն՝ սուսերներից խոփեր ձուլվեն, սվիններից՝ մանգաղներ, ազգ ազգի դեմ սուր չբարձրացնի, եւ մարդիկ չսովորեն պատերազմել (հմմտ. Եսայի. Բ 4):

Բարերար Աստծո մեզ պարգեւած հանդիպման հոգեւոր ուրախությունը Մեր սրտում, մեր Տիրոջ եւ Փրկչի շնորհը եւ խաղաղությունը հայցելով բոլորիս՝ հրավիրում ենք Ձեզ, սիրեցյա՛լ եղբայր, Ձեր պատգամը եւ սիրառատ օրհնությունը բերելու այստեղ համախմբված բազմահազար հավատացյալներին»:

Ապա խոսքով հանդես եկավ նաեւ Հռոմի Սրբազան Քահանայապետը.

«Մեծարգո՛ եւ հույժ սիրելի եղբայր, Ծայրագո՛ւյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց,

Պարո՛ն նախագահ,

Սիրելի՛ եղբայրներ եւ քույրեր,

Աստծո օրհնությունն ու խաղաղությունը ձեզ հետ լինեն:

Շատ ցանկացա այցելել այս սիրելի երկիրը՝ ձեր Աշխարհը, որ առաջինն ընդունեց քրիստոնյա հավատը: Ինձ համար առանձնաշնորհություն է գտնվել այս բարձունքների վրա, որտեղ՝ Արարատ լեռան հայացքի ներքո, նույնիսկ լռությունը մեզ խոսուն է թվում. խաչքարերը մեզ պատմում են անկրկնելի մի պատմություն, ամրակուռ հավատով եւ սոսկալի տառապանքներով հյուսված, մի պատմություն՝ հարուստ Ավետարանի սքանչելի վկաներով, որոնց ժառանգներն եք դուք: Գալիս եմ Հռոմից ուխտավոր, ձեզ հետ հանդիպելու եւ սրտի խորքից բխող իմ զգացումն արտահայտելու. այն ձեր եղբոր սերն է, եղբայրական գրկախառնումն է ամբողջ Կաթողիկե Եկեղեցու, որ ձեզ սիրում է եւ ձեր կողքին է:

Անցյալ տարիներին մեր Եկեղեցիների միջեւ միշտ շատ հարգալից եւ ստեպ հիշարժան այցերն ու հանդիպումները, Աստծու շնորհոք, սերտացան: Նախախնամությունը կամենում է, որ հենց այս օրը, երբ այստեղ Քրիստոսի սուրբ առաքյալների հիշատակն է կատարվում, կրկին միասին ենք՝ ամրապնդելու առաքելական հաղորդությունը մեր միջեւ: Երախտապարտ եմ Աստծուն՝ մեր Եկեղեցիների «իսկական եւ ներքին միության համար» (ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ Բ, Համամիութենական ծիսակատարություն, Երեւան, 26 սեպտեմբեր 2001. Ուսուցումներ ԻԴ, 2 [2001], 466) եւ շնորհակալ եմ ձեզ՝ Ավետարանին շատ անգամ հերոսական հավատարմության համար, որ անգնահատելի պարգեւ է բոլոր քրիստոնյաների համար: Մեր հանդիպումը «գաղափարների փոխանակում չէ, ընծաների փոխանակում է» (հմմտ. նույն, Շրջաբերական նամակ՝ Զի եղիցին մի, 28). Հնձենք այն, ինչ Հոգին է մեր մեջ ցանել՝ որպես յուրաքանչյուրին նվեր (հմմտ. Առաքելական հորդոր Ավետարանական ցնծություն, 246): Մեծ ուրախությամբ կիսում ենք միասին կտրած արդեն շատ առաջացած ճանապարհի բազում քայլերը եւ իրոք լիահույս նայում ենք այն օրվան, երբ Աստծո օգնությամբ միացած կլինենք Քրիստոսի զոհասեղանի շուրջ՝ հաղորդության լրիվ միությամբ:

Դեպի այդ բազմատենչ նպատակը «ուխտավորներ ենք, եւ միասին ճամփորդում [...] մեր սրտերը անկասկած ու անվարան վստահելով ուղեկցին» (նույն, 244):

Այս ընթացքում մեզ նախորդում եւ ընկերակցում են բազում վկաներ, հատկապես բազմաթիվ նահատակները, որոնք արյամբ կնքեցին հասարակաց հավատն ի Քրիստոս. նրանք մեր աստղերն են երկնքում, որ փայլում են մեր գլխավերեւում եւ նշում են ճանապարհը, որ մեզ մնում է կտրել այս աշխարհում՝ դեպի ամբողջական հաղորդություն: Մեծ հայրերի շարքում ուզում եմ ակնարկել սուրբ Ներսես Շնորհալի Կաթողիկոսին: Նա արտակարգ սեր էր տածում իր ժողովրդի եւ նրա ավանդությունների հանդեպ եւ միաժամանակ հակված էր մյուս Եկեղեցիներին, անխոնջ միության փնտրտուքին, Քրիստոսի կամքը իրականացնելու փափագող. որպեսզի հավատացողները «մեկ լինեն» (Հվ, 17, 21): Արդարեւ, միությունը ռազմավարական առավելություն չէ, փոխադարձ շահերի փնտրտուքով, այլ այն, ինչ Հիսուս խնդրում է մեզնից, եւ որ մեզ է մնում իրագործել բարի կամքով եւ բոլոր ուժերով, իրականացնելու համար մեր առաքելությունը. աշխարհին պարգեւել Ավետարանը հետեւողականորեն:

Դեպի այդ բազմատենչ նպատակը «ուխտավորներ ենք, եւ միասին ճամփորդում [...] մեր սրտերը անկասկած ու անվարան վստահելով ուղեկցին» (նույն, 244):

Այս ընթացքում մեզ նախորդում եւ ընկերակցում են բազում վկաներ, հատկապես բազմաթիվ նահատակները, որոնք արյամբ կնքեցին հասարակաց հավատն ի Քրիստոս. նրանք մեր աստղերն են երկնքում, որ փայլում են մեր գլխավերեւում եւ նշում են ճանապարհը, որ մեզ մնում է կտրել այս աշխարհում՝ դեպի ամբողջական հաղորդություն: Մեծ հայրերի շարքում ուզում եմ ակնարկել սուրբ Ներսես Շնորհալի Կաթողիկոսին: Նա արտակարգ սեր էր տածում իր ժողովրդի եւ նրա ավանդությունների հանդեպ եւ միաժամանակ հակված էր մյուս Եկեղեցիներին, անխոնջ միության փնտրտուքին, Քրիստոսի կամքը իրականացնելու փափագող. որպեսզի հավատացողները «մեկ լինեն» (Հվ, 17, 21): Արդարեւ, միությունը ռազմավարական առավելություն չէ, փոխադարձ շահերի փնտրտուքով, այլ այն, ինչ Հիսուս խնդրում է մեզնից, եւ որ մեզ է մնում իրագործել բարի կամքով եւ բոլոր ուժերով, իրականացնելու համար մեր առաքելությունը. աշխարհին պարգեւել Ավետարանը հետեւողականորեն:

Անհրաժեշտ միությունը իրականացնելու համար, սուրբ Ներսեսի համաձայն, բավարար չէ որեւէ մեկի բարի կամքը Եկեղեցում. անհրաժեշտ է բոլորի աղոթքը: Գեղեցիկ է այստեղ հավաքված լինելը՝ մեկս մյուսի համար, մեկս մյուսի հետ աղոթելու եւ հատկապես աղոթքի նվերն է, որ եկել եմ այս երեկո ձեզնից խնդրելու: Իմ կողմից վստահեցնում եմ, որ Հացն ու Բաժակը սուրբ Սեղանի վրա ընծայելիս չեմ դադարում ներկայացնել Տիրոջը Հայ Եկեղեցուն եւ ձեր սիրելի ժողովրդին:

Սուրբ Ներսեսը զգում էր նաեւ փոխադարձ սերն աճեցնելու անհրաժեշտությունը, որովհետեւ միայն սերն է ի վիճակի դարմանելու հիշողությունը եւ անցյալի վերքերը բուժելու. միայն սերն է ջնջում նախապաշարումները եւ թույլ տալիս ընդունելու, որ եղբոր հանդեպ բաց լինելը մաքրում եւ բարվոքում է սեփական համոզումները: Այդ սուրբ Կաթողիկոսի համար դեպի միություն ճանապարհին՝ էական է նմանակել Քրիստոսի սիրո ոճը, «Նա, որ հարուստ էր» (Բ Կոր. 8-9), «խոնարհեցրեց Ինքն Իրեն» (Փիլ 2, 8): Իր օրինակով՝ կանչված ենք քաջությունն ունենալու ձերբազատվելու քարացած համոզումներից եւ սեփական շահերից՝ հանուն սիրո, որ խոնարհվում է եւ նվիրվում, հանուն խոնարհ սիրո. այն քրիստոնեական կյանքի օրինյալ յուղն է, հոգեւոր թանկարժեք բալասանը, որ առողջացնում է, զորացնում եւ սրբացնում: «Թերությունները ծածկենք միասնական սիրով» (Ներսես Շնորհալի Կաթողիկոս Հայոց, Նամակք, Վենետիկ 1873, 316), եւ նույնիսկ,- հասկացնում էր,- սիրո յուրահատուկ քաղցրությամբ, որ փափկացնում է սրտի կարծրությունը նաեւ քրիստոնյաների, որ շատ հաճախ եսակենտրոն եւ սեփական շահերի ետեւից են: Ոչ թե հաշիվները եւ օգուտը, այլ խոնարհ եւ անձնուրաց սերը հոր բարեգթությունն է շարժում, Քրիստոսի օրհնությունը եւ Սուրբ Հոգու առատությունը: Աղոթելով եւ «սրտանց իրար բուռն սիրելով» (հմմտ. Պտ. 1, 22), խոնարհությամբ եւ հոգու բացվածքով տրամադրվենք ստանալու միության աստվածային ընծան: Վճռականությամբ շարունակենք մեր ընթացքը, մանավանդ թե, վազենք դեպի մեր միջեւ ամբողջական հաղորդությունը:

«Ձեզ եմ թողնում Իմ խաղաղությունը: Ոչ ինչպես աշխարհն է տալիս, Ես ձեզ եմ տալիս» (Հվ. 14, 27): Լսեցինք Ավետարանի այս խոսքերը, որ մեզ տրամադրում են Աստծուց պաղատելու այն խաղաղությունը, որ աշխարհը գտնելու շատ է տառապում: Ինչքան մեծ են այսօր խաղաղության ճանապարհին կանգնած խոչընդոտները, իսկ ինչքան ողբերգական՝ պատերազմների հետեւանքները: Մտածում եմ այն ժողովուրդների մասին, որոնք ստիպված են թողնել ամեն ինչ, հատկապես Միջին Արեւելքում, որտեղ բազմաթիվ եղբայրներ եւ քույրեր ենթարկվում են բռնության եւ հալածանքի, ատելության եւ հակամարտությունների պատճառով շարունակ հրահրված զենքի վաճառքի եւ բազմացման խարանից, ուժի դիմելու փորձությունից եւ մարդկային անձի հարգանքի պակասից, հատկապես տկարների, աղքատների եւ նրանց, ովքեր խնդրում են միայն պատվարժան կյանք:

Չեմ կարող չմտածել սոսկալի փորձությունների մասին, որոնց միջով անցել է ձեր ժողովուրդը. հազիվ մի դար է անցել «մեծ եղեռնից», որ ձեզ պատահեց: Այս «անլուր եւ խոր ջարդը» (Ուղերձ Սուրբ Պատարագի սկզբին, հայածես հավատացյալներին, 12 ապրիլ 2015), այս անարդարության ողբերգական խորհուրդը, որ ձեր ժողովուրդն իր մարմնի վրա կրեց՝ միշտ տպավորված է մնում հիշողության մեջ եւ այրում է սիրտը: Ուզում եմ շեշտել, որ ձեր տառապանքները մեզ են պատկանում. «Քրիստոսի խորհրդավոր մարմնի անդամնե-

Ֆրանցիսկոս Պապի այցը Հայաստան

րի տառապանքներն են» (Հովհաննես Պողոս Բ, Առաքելական նամակ հայ ժողովրդի Մկրտության 1700-ամյակի առիթով. Ուսուցումներ ԻԴ,1 [2001], 275). հիշելը միայն պատեհ չէ, այլ պարտավոր. ամեն ժամանակների համար ազդարարություն լինի, որպեսզի աշխարհն այլեւս երբեք չընկնի այդպիսի սխալների հորձանքի մեջ:

Ցանկանում եմ միաժամանակ հիացմունքնով հիշել ինչպես քրիստոնեական հավատը, «նույնիսկ հայոց պատմության ամենաողբերգական պահերին, մղիչ զսպանակն է եղել, որ նշեց տառապյալ ազգի ժողովրդի վերածնունդը (նույն, 276): Այդ է ձեր իսկական ուժը, որ թույլատրում է Զատկի խորհրդավոր եւ փրկարար ճանապարհին բացվելու. բաց մնացած եւ կատաղի ու անիմաստ ատելությունից պատճառված վերքերը կարող են որոշ կերպով հարուցյալ Քրիստոսի վերքերին համեմատվել, այն վերքերին, որ նրան պատճառեցին եւ որ դեռ իր մարմնի վրա տպավորված են: Նա փառավորված ցույց տվեց նրանց աշակերտներին՝ Զատկի երեկոն (հմմտ. Հվ. 20, 20) խաչի վրա կրած ցավերի այդ սարսափելի վերքերը: Այսպես, նույնիսկ ամենամեծ ցավը, խաչի փրկագործ զորությունից փոխակերպված, որի մունետիկն ու վկաներն են հայերը, կարող է խաղաղության սերմ դառնալ ապագայի համար:

Հիշողությունը սիրուց ներթափանցված արդարեւ նոր եւ զարմանալի արահետներով գնալու ատակ է դառնում, որտեղ ատելության դավերը փոխակերպվում են հաշտության ծրագրերի, ուր կարելի է հուսալ լավագույն ապագա բոլորի համար, ուր «երանի խաղաղարարներին» (Մատթ. 5, 9): Բոլորի համար լավ կլինի աջակցել ապագայի հիմքերը դնելու, որ թույլ չտա վրեժի խաբեական ուժից ներծծվել. ապագա, որտեղ երբեք չհոգնեն ստեղծելու խաղաղության պայմաններ. բոլորի համար արժանավայել աշխատանք, առավել կարիքավորների խնամատարություն եւ անխոնջ պայքար կաշառակերության դեմ, որ պետք է արմատախիլ անել:

Սիրելի՛ երիտասարդներ, այս ապագան ձերն է. Ձեր մեծերի իմաստությունն ամբարելով, խաղաղարարներ դառնալու հնարավորությունն եք ունենում. ոչ թե ստատուս-քվո-ի նոտարներ, այլ հանդիպման եւ հաշտության մշակույթի դրական գործիչներ: Աստված օրհնի ձեր ապագան եւ «պարգեւի, որ հայ եւ թուրք ժողովուրդների հաշտության ուղին կրկին ձեռք առնվի, եւ խաղաղությունը տիրի Ղարաբաղում» (Պատգամ Հայերին, 12 ապիրլ 2015):

Այս տեսանկյունից, կուզենայի վերջապես հիշել Քրիստոսի խաղաղության մեծ վկային եւ գործչին՝ սուրբ Գրիգոր Նարեկացուն, որին Եկեղեցու Վարդապետ հռչակեցի: Նա կարող էր հայտարարվել նաեւ «Խաղաղության Վարդապետ»: Նա այսպես է գրել այդ արտասովոր Գրքում, որ սիրում եմ անվանել որպես «հայ ժողովրդի հոգեւոր օրենսգիրք». «Հիշի՛ր, [Տեր,...] նրանց, ովքեր մարդկային ցեղում մեր թշնամիներն են, սակայն նրանց բարիքի համար. նրանց մեջ իրագործիր ներում եւ ողորմություն [...] Մի՛ վերացնիր նրանց, ովքեր ինձ կծոտում են. կերպարանափոխի՛ր: Արմատախիլ արա աշխարհիկ ախտավոր ընթացքը եւ տնկիր բարին իմ եւ նրանց մեջ» (Մատյան ողբերգության, 83, 1-2): Նարեկացին, խորապես գիտակից, մասնակից ամեն կարիքի (նույն, 3,2), կամեցավ մինչեւ ամեն ժամանակի եւ տեղանքի տկարների եւ մեղավորների հետ նույնանալ, միջնորդելու համար բոլորի օգտին (նույն, 31, 3; 32, 1; 47, 2). նա դարձավ «ամբողջ աշխարհի աղոթամատույցը» (նույն, 28, 2): Նրա այսպիսի ընդհանրական զորակցությունը մարդկության հետ, քրիստոնեական մեծ պատգամ է խաղաղության, ներդաշնակ ճիչ, որ բոլորի համար ողորմություն է հայցում: Տարբեր երկրներում ներկա հայերը, որոնց եղբայրաբար գրկում եմ այստեղից, այս հաղորդակցության իրձին լինեն պատգամաբերներ, «խաղաղության դեսպաններ» (Հովհաննես Պողոս Բ, Առաքելական նամակ հայ ժողովրդի Մկրտության 1700-ամյակի առիթով. Ուսուցումներ ԻԴ, 1 [2001], 278): Աշխարհը բոլոր կարիքն ունի ձեր այս քարոզության, կարիքն ունի ձեր ներկայության, կարիքն ունի ձեր ամենաջինջ վկայության: Խաղաղություն ամենեցուն»:

Ուղերձներից հետո՝ սբ Պատարագի «Քրիստոս մեր մեջ հայտնվեց» հատվածի երգեցողության ժամանակ, երկու Հովվապետերը միմյանց ողջույն տվեցին, որն ապա փոխանցվեց նաեւ արարողությանը ներկա բազմահազար մարդկանց:

Ողջույնից հետո Ֆրանցիսկոս Պապը «Պահպանեա զմեզ, Քրիստոս Աստուած մեր» աղոթքով օրհնեց ներկա ժողովրդին:

Արարողության ավարտին հնչեց Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանի խոսքը. «*Ես եկել եմ խաղաղության այս աղոթքին մասնակցելու մի երկրից՝ Սիրիայից, որը այսօր շարունակում է տառապել խաղաղության պակասից: Տարիներ շարունակ այստեղ չեն դադարում պատերազմներն ու ահաբեկչությունները, որոնց հետեւանքով զոհվում են կամ փախստական դառնում բազմաթիվ անմեղ մարդիկ, այդ թվում՝ երեխաներ, տարեցներ եւ կանայք: Ավերվում են բնակավայրեր, եկեղեցիներ ու մզկիթներ, դպրոցներ ու հիվանդանոցներ: Ոչ վաղ անցյալում էր, երեք տարի առաջ, որ Սիրիայի Դեր Զորի անապատում պայթեցվեց Հայոց ցեղասպանության սուրբ նահատակների ածյուն-նշխարներն ամփոփող Սրբոց Նահատակաց եկեղեցին:*

Այսօր, ի ներկայության ՀՀ նախագահի եւ հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Հռոմի Սրբազան Քահանայապետի,՝ համատեղ աղոթքով մենք խնդրեցինք խաղաղություն եւ կայունություն ողջ աշխարհի, այս ալեկոծվող տարածաշրջանի եւ մեր սիրելի Հայաստանի համար:

Ձե՛րդ Սրբություն, Հայաստան Ձեր պատմական այցի առիթով, որը Դուք կոչել եք ուխտագնացություն, մեր ժողովրդի անունից Ձեզ պիտի փոխանցվի մի խորհրդանշական նվեր՝ Նոյան տապանի մանրակերտը: Նոյան տապանը, որ իջավ Արարատի գագաթին, մնայուն խորհրդանիշն է մարդկության փրկության ու վերածննդի: Վերջին տարիներին այսպիսի փրկության տապան եղավ նաեւ Հայաստանը՝ Մերձավոր Արեւելքից փախստական դարձած հազարավոր ընտանիքների համար, ովքեր շառավիղներն են Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկված հայերի:

Եվ այժմ Սիրիայից, Իրաքից, Լիբանանից, Արաբական Միացյալ Էմիրություններից, Եգիպտոսից, Թուրքիայից, Իսրայելից, Հորդանանից, Քուվեյթից, Իրանից ժամանած հայորդիներ իրենց հետ բերած մեկական բուռ հող կավելացնեն այս տապանի մեջ, ուր պիտի դրվի հայկական խաղողի տունկը: Խորհրդանշական այս նվերը Սուրբ Պետրոսի Աթոռում թող մնայուն հիշատակ լինի Նոյան տապանն իր մեջ կրող Հայաստան աշխարհից՝ որպես մասունք աշխարհում խաղաղության համար մատուցված հոգեպարար այս արարողությունից»:

Խոսքի ավարտին կատարվեց Սրբազան Քահանայապետի՝ Հայաստան այցին նվիրված Գարրի Քեսայանի հեղինակած «Ave, Maria» ստեղծագործությունը՝ մենակատարությամբ գերմանաբնակ հայազգի սոպրանո Հրաչուհի Բազենցի: Հոգեպարար երգեցողության ներքո Մերձավոր Արեւելքից ժամանած մանուկները Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Հռոմի Սրբազան Քահանայապետին օրհնության համար մատուցեցին իրենց երկրներից բերված հողը: Օրհնությունից հետո պատմական Հայաստանի տարազներով զգեստավորված երեխաները հողը լցրեցին Նոյան տապանի մանրակերտի մեջ, ուր եւ դրվեց հայկական խաղողի տունկը: Երկու Հովվապետերը ջրեցին որթատունկը: Վատիկանին ընծայվելիք Նոյան տապանի մանրակերտի հեղինակն ամերիկահայ դիզայներ Մայքլ Արամն է:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Հռոմի Սրբազան Քահանայապետն իրենց օրհնությունը բաշխեցին ժողովրդին եւ հատկապես արարողությանը ներկա հաշմանդամներին:

Արարողության ավարտին Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ ղեկավարությամբ Էդուարդ Թոփչյանի, եւ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը՝ ղեկավարությամբ Հայաստանի ժողովրդական արտիստ Հովհաննես Չեքիջյանի, ինչպես նաեւ մասնակցությամբ հայ դասական երաժշտության անվանի մենակատարների, հանդես եկան համերգային ծրագրով:

❖❖❖

Հունիսի 26-ին համայն հայության հոգեւոր կենտրոն **Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Ս. Տրդատի բաց խորանում Պատարագ մատուցեց Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝** աղոթական ներկայությամբ Հռոմեակաթոլիկ Եկեղեցու առաջնորդ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի:

Հայրապետական Պատարագին ներկա էին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը եւ առաջին տիկին Ռիտա Սարգսյանը, ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարերարներ, աշխարհասփյուռ թեմերի պատվիրակներ, հասարակական, մշակութային գործիչներ, դիվանագիտական առաքելությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Հայաստանից եւ Սփյուռքից հայոց հոգեւոր կենտրոն ժամանած բազում ուխտավորներ:

Արարողությունն սկսվեց հայրապետական հանդիսավոր եւ խաչվառազարդ թափորով, որով Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապը, ուղեկցությամբ Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների հոգեւորականներից կազմված հանդիսավոր թափորի, Մայր տաճարի ավետաբեր ղողանջների եւ «Խորհուրդ խորին» հոգեպարար շարականի երգեցողության ներքո ամպհովանիով առաջնորդվեցին Ս. Տրդատի բաց խորան, որտեղ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը սբ Պատարագ մատուցեց:

Հայրապետական ամպհովանին կրում էին Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Իսահակ վրդ. Պողոսյանը, Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ Կիրակոս վրդ. Դավթյանը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության ներկայացուցիչներ, Արաբական Միացյալ Էմիրությունների եւ Քաթարի թեմի կաթողիկոսական փոխանորդ Մեսրոպ ծ. վրդ. Սարգիսյանը եւ Անթիլիասի դպրեվանքի տեսուչ Թորգոմ ծ. վրդ. Տոնոյանը:

Ս. Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ որպես առընթերականեր, սպասավորում էին ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արք. Տերտերյանն ու Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը:

Ս. Պատարագի ընթացքում երկու Հովվապետերը միմյանց ողջույն տվեցին, ապա Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն օրվա կապակցությամբ իր պատգամը հղեց համայն հայ ժողովրդին եւ ներկաներին:

«Ձե՛րդ Սրբություն՝ սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Մեծարգո նախագահ Հայաստանի Հանրապետության,

Հոգեւոր եղբայրներ եւ բարեպաշտ ժողովուրդ,

Առ Աստված փառաբանության օրեր են Սուրբ Էջմիածնում՝ հոգեւոր բերկրանքի եւ համատեղ աղոթքի առատությամբ: Այսօր սուրբ Պատարագի արարողության ենք համախմբվել՝ աղոթակցությամբ Հռոմի Սրբազան Քահանայապետ, Մեր սիրեցյալ եղբայր Ֆրանցիսկոս Պապի:

Խորհրդանշական է, որ սուրբ եւ անմահ այս Պատարագին որպես ընթերցված հնչեց հացի բազմացման սուրբգրական

Հռոմի Սրբազան Քահանայապետ

պատմությունը: Ավետարանիչը պատմում է, որ երբ Հիսուս առանձնացավ, ժողովրդի բազմությունը, իմանալով այս մասին, գնաց Նրա հետեւից: Եվ երբ Տերը տեսավ հավաքված բազմությանը, գթաց նրանց եւ բժշկեց հիվանդներին: Երեկոյան դեմ աշակերտները խնդրեցին Տիրոջը ժողովրդին ազատ արձակել, որպեսզի ուտելիք գտնեն: Քրիստոս նրանց պատվիրեց մարդկանց կերակրել: Սակավ էր, սակայն, ուտելիքը, եւ Տերը օրհնեց այն, ու հրաշքով առատացած հացը բավարար դարձավ, որպեսզի առաքյալները կերակրեն հավաքված ողջ բազմությանը:

Այս հրաշագործությունը աստվածային շնորհներով, տերունավանդ ուսուցումներով քաղցյալ հոգիները հագեցնելու, նաեւ՝ գթասրտությամբ կարիքավորներին օգնելու խորհուրդն ունի, որը դարձավ կարեւոր ծառայություններից Քրիստոսի Սուրբ Եկեղեցու առաքելության: Տերը հորդորում է Իր հետեւորդներին հավատքը կենդանի դարձնել գործերով, աղոթքին ու պաշտամունքին զուգակցել ողորմությունն ու գթասրտությունը, կարիքի ու նեղությունների ամոքումը, որոնցով առաքյալի խոսքի համաձայն՝ գործակից ենք Աստծուն (Ա Կորնթ. Գ 9): Այս տեսիլքով Եկեղեցու բազում մարգարեաշունչ հայրեր ու երանաշնորհ հայրապետներ, քաջ ու բարի հովիվներ, հավատքի անթիվ վկաներ ու բարեպաշտ հավատացյալներ դարեր շարունակ Քրիստոսի Եկեղեցու պատմության էջերը պատկերագրել են Աստծո Խոսքի նվիրյալ քարոզությամբ եւ ողորմածության ու խնամատարության մեծագործություններով, որպեսզի մարդիկ զորանան հավատքով եւ հավատքի գործերով վկայեն Աստծո ներկայությունը մարդկության կյանքում:

Այսօր առ Աստված հավատքը փորձության է ենթարկվում, եւ մարդկային հոգիները կարծրանում են ինչպես նեղությունների եւ դժվարությունների մեջ, այնպես եւ հարստության ու շքեղության, երբ անհաղորդ են հանապազօրյա հացին կարոտյալ, ցավի ու տառապանքի մեջ ապրող մարդկանց հոգսերին: Հավատքը փորձության է ենթարկվում ծայրահեղական եւ այլ գաղափարախոսություններով, այլատյացությամբ, մոլուցքներով, գայթակղություններով, անձնակենտրոն շահերով: Ուժգնանում են աշխարհիկացման ընթացքները, խաթարվում են հոգեւոր-բարոյական ընկալումներն ու արժեքները, վտանգվում է ընտանիքի աստվածահաստատ կառույցը: Փորձել կառուցել աշխարհ առանց Աստծո, աղավաղել աստվածադիր օրենքն ու պատվիրանները, այս է ժամանակակից կյանքի չարիքի արմատը, որն առաջ է բերում տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնապահպանական ու տարաբնույթ խնդիրներ, որոնք օրեցօր խորանում են՝ սպառնալով մարդկության բնականոն կյանքին:

Այսուհանդերձ՝ աշխարհը չի դադարում լինել կենտրոնը աստվածային սիրո եւ խնամատարության: Տերը շարունակում է ձայնել. «Ես եմ կենաց հացը, ով դէպի Ինձ գայ, քաղց չի զգայ, եւ ով Ինձ հաւատայ, երբեք չի ծարաւի» (Յովհ. Զ 35): Տիրոջ քաղցր վարդապետությունը ճաշակածը խոնարհվում է ընկածին բարձրացնելու, մարդկանց սրտերում հույսն ու հավատքը առատացնելու, հացի բազմացման հրաշքը կրկնելու՝ աջակցելով ու մխիթարելով կարիքավորներին, հիվանդներին ու վշտացյալներին: Տերունապատվեր այս ընթացքներով, հոգեւոր եւ բարոյական արժեքները կենսագործելով է, որ բարին պիտի զորանա աշխարհում, եւ հաղթահարվեն արդի մարտահրավերները: Բոլոր բարի գործերը արտահայտում են աստվածային խնամքը մարդկության ու աշխարհի հանդեպ՝ ըստ Տիրոջ խոսքի՝ «արքայութիւնը ներսում, ձեր մէջ է» (Ղուկ. ԺԷ 21), որի հաստատման համար Եկեղեցիներն իրենց սպասավորությունն են բերում աշխարհում:

Սիրելինե՛ր, այս օրերին Մեր հոգեւոր եղբոր՝ Ֆրանցիսկոս Պապի հետ միասնական այցերով ու աղոթքներով վերստին հաստատեցինք, որ Քրիստոսի Սուրբ Եկեղեցին մեկ է աշխարհում՝ Քրիստոսի Ավետարանի տարածման, արարչագործության հանդեպ խնամքի, համընդհանուր խնդիրներին դիմագրավելու, Աստծո ստեղծագործության փառքն ու պսակը հանդիսացող մարդու փրկության կենսական առաքելությամբ:

Քրիստոսի Եկեղեցու առաքելության անբաժանելի մասն է ազգերի եւ ժողովուրդների միջեւ ամրապնդումը համերաշխության, եղբայրության ու գործակցության, որի վկայությունն է այսօր սրբազան այս Պատարագին մասնակցությունը Հայաստանում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ ասորիների, բելառուսների, հույների, վրացիների, հրեաների, եզդիների, քրդերի, գերմանացիների, լեհերի, ռուսների, ուկրաինացիների, ովքեր մեր ժողովրդի հետ եղբայրական համակեցության մեջ իրենց նպաստն են բերում մեր երկրի զորացմանն ու հասարակական կյանքի առաջընթացին:

Շնորհաշատ այս օրը գոհունակություն է Մեզ համար վերստին հայտնել Մեր շնորհակալությունը Ֆրանցիսկոս Պապին՝ եղբայրական իր այցի առիթով: Մենք եւ մեր ժողովուրդը միշտ պիտի աղոթենք Ձեզ համար, սիրեցյա՛լ եղբայր, եւ ի սեր մարդկության բարօրության ու խաղաղ կյանքի եւ Քրիստոսի Սուրբ Եկեղեցու պայծառության Ձեր ջանքերի համար: Թող Տերը պահի Ձեզ կորովաշատ, օրհնի ու հաստատուն պահպանի մեր Եկեղեցիները սիրո միության եւ գործակցության մեջ եւ պարգեւի եղբայրության վկայության նորանոր առիթներ: Ձեր ամենօրյա աղոթքներում հիշեք հայ ժողովրդին, հայոց երկիրն ու Հայ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Աղոթական հոգով հայցում ենք Բարձրյալն Աստծո ամենախնամ Սուրբ Աջի պահպանությունն ու զորակցությունը պատերազմներից ու ահաբեկչություններից տուժածներին, սովի, աղքատության եւ փորձությունների մեջ գտնվողներին: Հայցում ենք մեր Տիրոջ ամենառատ շնորհները մեր կյանքին եւ համայն աշխարհին: Ամեն»:

Այնուհետեւ ողջույնի խոսքով ներկաներին դիմեց Ֆրանցիսկոս Պապը.

«Ձե՛րդ Սրբություն, հո՛ւյժ սիրելի եպիսկոպոսներ,

Սիրելի՛ եղբայրներ եւ քույրեր,

Այս հույժ ցանկալի եւ ինձ համար արդեն անմոռանալի այցի գագաթնակետին ուզում եմ Տիրոջ բարձրացնել իմ շնորհակալությունը, միացնելով այն այս Սեղանից բարձրացած փառաբանական եւ գոհաբանական մեծ աղոթքին: Այս օրերին Ձերդ Սրբությունը սեփական տան դռները բացեց ինձ, եւ զգացինք թե «ինչ գեղեցիկ եւ ինչքան քաղցր է, որ եղբայրները միասին բնակվեն» (Սղ. 133, 1): Հանդիպեցինք, եղբայրաբար ողջագուրվեցինք, միասին աղոթեցինք, փոխանակեցինք ընծաները, հույսերն ու մտահոգությունները, Քրիստոսի Եկեղեցու՝ որի սրտի միաձայն զարկերը լսում ենք, եւ հավատացած ենք եւ զգում ենք, թե մեկ է: «Մե՛կ մարմին եւ մե՛կ հոգի, ինչպես որ մե՛կ է ձեր հույսը [...]. մե՛կ Տեր, մե՛կ հավատ, մե՛կ մկրտություն: Մե՛կ Աստված եւ Հայր բոլորի, որ վեր է բոլորից, բոլորի հետ եւ մեր բոլորի մեջ» (Եփ 4,4-6). իրոք կարող ենք ուրախությամբ մերը դարձնել Պողոս առաքյալի այս խոսքերը: Հենց սուրբ առաքյալների հիշատակին հանդիպեցինք: Սուրբ Բարթողիմեոս եւ Թադեոս, որ առաջի անգամ քարոզեցին Ավետարանը այս աշխարհում, եւ սուրբ Պետրոսն ու Պողոսը, որ Հռոմում իրենց կյանքը գոհեցին Տիրոջ համար, մինչ թագավորում են երկնքում Քրիստոսի հետ՝ վստահաբար ուրախանում են տեսնելով մեր սերն ու ժրաջան ձգտումը՝ ամբողջական հաղորդության: Այս բոլորի համար շնորհակալ եմ Տիրոջը ձեզ համար եւ ձեզ հետ. փառք Աստծո:

Այս սբ Պատարագի ընթացքում հանդիսավոր Երեքսրբյանը բարձրացավ երկինք, օրհնաբանելով Աստծո սրբությունը. Ամենաբարձրյալի օրհնությունը առատորեն իջնի երկիր, Աստվածամոր, մեծ սրբերի եւ վարդապետների, մարտիրոսների եւ հատկապես բազմաթիվ նահատակների բարեխոսությամբ, որ անցած տարի այս վայրում սրբադասեցիք: «Միածինը, որ այստեղ իջավ», օրհնի մեր ճանապարհը: Սուրբ Հոգին բոլոր հավատացյալներին պարգեւի մեկ սիրտ, մեկ հոգի. մեզ այցելի միության մեջ վերահաստատելու: Այս պատճառով ուզում եմ կրկին կանչել Նրան՝ իմը դարձնելով սքանչելի խոսքերից, որոնք ձեր Ծեսի մեջ մուտք են գործել: Եկ, Հոգի, Դու «որ բարեխոս ես մեզ համար, անմռունչ հեծություններով ողորմած Հոր մոտ, որ սրբերին պահում ես եւ մեղավորներին մաքրում», թող իջնի մեզ վրա քո սիրո եւ միության կրակը, եւ «այս կրակով հալին մեր գայթակղության պատճառները» (հմմտ. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, 33, 5), նախեւառաջ միության պակասը Քրիստոսի աշակերտների միջեւ:

Հայ Եկեղեցին խաղաղությամբ ընթանա, եւ մեր միջեւ խաղաղությունը կատարյալ լինի: Բոլորի մեջ ծնվի միության հզոր ցանկություն, այնպիսի միության, որ պետք չէ լինի «ո՛չ ենթարկություն մեկը մյուսին, ո՛չ կլանում, այլ առավել ընկալում բոլոր շնորհներին, որ Աստված տվել է յուրաքանչյուրին՝ ամբողջ աշխարհին հայտնելու համար փրկագործության մեծ խորհուրդը՝ իրագործված Տեր Քրիստոսից՝ Սուրբ Հոգու շնորհիվ» (Սրբազան Հոր խոսքեր աստվածային Ծիսակատարության ընթացում, Սուրբ Գեւորգ Պատրիարքական Եկեղեցի, Պոլիս, 30 նոյեմբեր, 2014):

Սրբերի հորդորներն ընդունենք, լսենք խոնարհների եւ աղքատների ձայնին, ատելության բազմաթիվ գոհերին, որ տառապեցին եւ իրենց կյանքը գոհեցին հավատի համար. ականջ դնենք նոր սերունդներին, որ անցյալի բաժանումներից ազատ ապագա են խնդրում: Այս սրբատեղիից կրկին սփռվի ճաճանչափայլ լույսը. այս երկրի լուսավորիչին՝ ձեր Ավետարանի Հոր՝ Սուրբ Գրիգորի հավատի լույսին միանա սիրո լույսը՝ որ ներում եւ հաշտվում է:

Ինչպես առաքյալները Ձատկի առավոտյան, տարակույսներով եւ անվստահություններով հանդերձ, վազեցին հարության վայրը, նոր հույսի երջանիկ արեւագալից դյութված (հմմտ. Յվ. 20, 3-4), նույնպես մենք եւս այս սուրբ կիրակի հետեւում ենք Աստծո կանչին՝ կատարյալ միության, եւ արագացնենք մեր քայլերը:

Իսկ այժմ, Սրբությո՛ւն, Աստծո անունով խնդրում եմ, որ ինձ օրհնեք, օրհնեք ինձ եւ Կաթողիկե Եկեղեցին, օրհնեք մեր այս ընթացքը՝ դեպի կատարյալ միություն»:

Պատարագի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հռոմի Սրբազան Քահանայապետը միասին օրհնեցին ներկա ուխտավոր ժողովրդին:

❖❖❖

Հունիսի 26-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Վեհարանի գահասրահում տեղի ունեցավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի համատեղ հռչակագրի ստորագրման արարողությունը:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ ՀԱՄԱՏԵՂ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Այսօր համայն հայության հոգեւոր կենտրոն Սուրբ Էջմիածնում, մենք՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Ֆրանցիսկոս Պապը, ընծայում ենք մեր մտքերը եւ սրտերը՝ որպես շնորհակալության տուրք Ամենակարողին՝ պայքարով քայքայված եւ սփոփանքի ու հույսի ծարավով լեցուն աշխարհում շարունակելու եւ մեծացնելու հավատի ու սիրո սերտ կապերը Հայոց Եկեղեցու եւ Կաթոլիկ Եկեղեցու միջեւ՝ փրկության ավետարանական ուղերձի իրենց համընդհանուր վկայությամբ:

Մենք փառաբանում ենք Ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, ընձեռելու համար մեզ հնարավորությունը մեկտեղվելու բիբլիական Արարատի երկրում, որը կանգուն է որպես վկայություն, որ Աստված է միշտ մեր պաշտպանությունն ու փրկությունը:

Գոհունակությամբ ու հոգեւոր ուրախությամբ ենք անդրադառնում, որ 2001 թվականին Քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով Հայաստան այցելեց Սուրբ Հովհաննես-Պողոս Բ Պապը՝ որպես Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների եղբայրական ջերմ հարաբերությունների պատմության նոր էջի վկայություն: Մենք երախտապարտ ենք, որ շնորհն ենք ունեցել միասին լինելու Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարում հանդիսավոր Պատարագի ժամանակ՝ 2015 թ. ապրիլի 12-ին, որտեղ մենք մեր հանձնառությունն արտահայտեցինք հակադարձելու բռնության ու անհանդուրժողականության ցանկացած դրսեւորում՝ վերակոչելով այն, ինչ արդեն հաստատվել էր Հովհաննես Պողոս Բ-ի եւ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից ստորագրված համատեղ հայտարարության մեջ, որ «մեկուկես միլիոն հայ քրիստոնյաների բնաջնջումն ընդհանրապես ընկալվում է իբրեւ Ի դարի առաջին ցեղասպանություն» (Համատեղ հայտարարություն, Գարեգին Բ եւ Հովհաննես-Պողոս Բ, 27 սեպտեմբերի, 2001 թ.):

Փառք Բարձրյալին, որ այսօր քրիստոնեական հավատը կենսունակ իրականություն է Հայաստանում, եւ Հայոց Եկեղեցին իր լիարժեք առաքելությունն է իրականացնում՝ եկեղեցիների միջեւ տիրող համագործակցության եղբայրական ոգով նեցուկ լինելով հավատացյալներին՝ զորակից, արդար եւ խաղաղ աշխարհի կերտման գործում: Ցավոք, մենք վկաներ ենք մեր աչքերի առաջ տեղի ունեցող մի մեծ ողբերգության՝ անթիվ-անհամար անմեղ մարդկանց սպանությունների, Մերձավոր Արեւելքում եւ աշխարհի այլ ծագերում էթնիկ, տնտեսական, քաղաքական եւ կրոնական հիմքերի վրա զարգացող շարունակական բնույթի հակամարտություններով թելադրված տեղահանումների կամ պարտադրված ցավալի ու անորոշ աքսորների: Այդ ամենի արդյունքում կրոնական եւ էթնիկ փոքրամասնությունները դարձել են հալածանքների եւ դաժան վերաբերմունքի թիրախ՝

Ֆրանցիսկոս Պապի այցը Հայաստան

այն առումով, որ կրոնական սեփական համոզմունքի համար տառապելը դարձել է ամենօրյա իրականություն: Նահատակները պատկանում են բոլոր Եկեղեցիներին, եւ նրանց տառապանքը «արյան էկումենիզմ» է, որն անդրանցնում է քրիստոնյաների միջեւ առկա պատմական բաժանումները՝ մեզ բոլորիս կոչելով նպաստել Քրիստոսի առաքյալների տեսանելի միասնականությանը: Մենք, սուրբ առաքյալների՝ Պետրոսի եւ Պողոսի, Թադեոսի եւ Բարդուղիմեոսի բարեխոսությամբ, միասնաբար աղոթում ենք, որ սրտերի փոփոխություն տեղի ունենա բոլորի մեջ, նրանց, ովքեր գործում են այսպիսի հանցանքներ, եւ նրանց, ովքեր իրենց դիրքի շնորհիվ կարող են կանգնեցնել բռնությունները: Մենք հորդորում ենք ազգերի առաջնորդներին՝ ունկնդրելու միլիոնավոր մարդկային արարածների կոչին, ովքեր խաղաղություն եւ արդարություն են տենչում աշխարհում, ովքեր հարգանք են պահանջում իրենց աստվածատուր իրավունքների նկատմամբ, ովքեր անհապաղ կարիք ունեն հացի, այլ ոչ թե զենքերի:

Ցավոք, մենք ականատես ենք կրոնի եւ կրոնական արժեքների արմատական դրսեւորումների, որոնք կիրառվում են՝ ատելության, խտրականության ու բռնության տարածումն արդարացնելու համար: Նմանատիպ հանցանքների՝ կրոնական գաղափարներով արդարացումն անընդունելի է, քանի որ «Աստված խռովության Աստվածը չէ, այլ՝ խաղաղության» (Ա Կորնթ. 14:33): Ավելին. կրոնական տարբերությունների հանդեպ հարգանքն անհրաժեշտ պայման է էթնիկ ու կրոնական տարբեր համայնքների խաղաղ համակեցության համար: Եվ հենց քրիստոնյա լինելով է, որ մենք կոչված ենք խաղաղության ու հաշտության ուղիներ փնտրելու եւ իրագործելու: Այս իմաստով մենք հուսով ենք, որ Լեռնային Ղարաբաղին վերաբերող հարցերը կգտնեն խաղաղ լուծում:

Հիշելով այն ամենը, ինչ Հիսուս սովորեցրեց Իր աշակերտներին, երբ Նա ասաց. «Ես սոված էի, եւ դուք Ինձ հաց տվեցիք, Ես ծարավ էի, եւ դուք Ինձ խմելու մի բան տվեցիք, Ես օտարական էի, եւ դուք Ինձ ընդունեցիք, Ես մերկ էի, եւ դուք Ինձ հագցրեցիք, Ես հիվանդ էի, դուք Ինձ այցելեցիք, Ես բանտում էի, եւ դուք եկաք Ինձ տեսության» (Մատթ. 25:35-36), մենք խնդրում ենք մեր Եկեղեցիների հավատացյալներին բացելու իրենց սրտերն ու ձեռքերը՝ օգնելու պատերազմի եւ ահաբեկչության զոհերին, փախստականներին եւ նրանց ընտանիքներին: Կարեւորվում են մեր մարդասիրության զգացումը, մեր զորակցությունը, կարեկցանքը եւ մեծահոգությունը, որոնք կարող են ճիշտ արտահայտվել միայն առկա նյութական պաշարների անհապաղ եւ գործնական նվիրատվությամբ:

Մենք ընդունում ենք այն, ինչն արդեն իսկ արվում է, բայց պնդում ենք, որ ավելին պետք է արվի քաղաքական առաջնորդների եւ միջազգային կառույցների կողմից, որպեսզի ապահովված լինի բոլորի՝ խաղաղության եւ անվտանգության մեջ ապրելու իրավունքը, պաշտպանված լինի օրենքի գերակայությունը, կրոնական եւ էթնիկ փոքրամասնությունների պաշտպանությունը, կանխված լինեն մարդկային թրաֆիքինգը եւ մաքսանենգությունը:

Հասարակության ստվար հատվածների աշխարհիկացումը, օտարումը հոգեւորից ու աստվածայինից անխուսափելիորեն հանգեցնում են մարդու եւ մարդկային ընտանիքի ապասրբացմանն ու նյութապաշտական ընկալմանը: Այս առումով մենք մտահոգ ենք շատ երկրներում ընտանեկան կյանքի ճգնաժամով: Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիներն ընտանիքի մասին նույն ընկալումն ունեն, որը հիմնված է ազատ կամքով ու հավատարմությամբ ծնված սիրո արդյունք հանդիսացող տղամարդու եւ կնոջ ամուսնության վրա:

Մենք ուրախությամբ արձանագրում ենք, որ չնայած քրիստոնյաների միջեւ առկա բաժանումներին, այն, ինչ մեզ միավորում է, ավելին է, քան այն, ինչ մեզ բաժանում է, որի վրա էլ պետք է կառուցել Քրիստոսի Եկեղեցու միությունը, ըստ Տիրոջ Խոսքի, որ բոլորը մեկ լինեն (Հովհ. ԺԷ 21): Վերջին տասնամյակներում մեր Եկեղեցիների հարաբերությունները թեւակոխել են որակապես նոր փուլ՝ ամրապնդված լինելով համատեղ աղոթքներով եւ ժամանակակից մարտահրավերներին դիմագրավելու միասնական ջանքերով: Մենք այսօր համոզված ենք այս հարաբերությունների շարունակականության խիստ կարեւորության մեջ՝ երկուստեք առավել խոր եւ վճռական հանձնառությամբ ոչ միայն աստվածաբանական մարզում, այլեւ աղոթական եւ գործնական համագործակցությամբ տեղական համայնքներում՝ լիարժեք հաղորդակցություն եւ միության հստակ արտահայտություններ կիսելու տեսլականով: Մենք հորդորում ենք մեր հավատացյալներին ներդաշնակ կերպով աշխատելու հասարակության մեջ քրիստոնեական արժեքների զորացման համար, որոնք արդյունավոր կերպով նպաստում են արդարության, խաղաղության եւ մարդկային համերաշխության քաղաքակրթության կառուցմանը: Հաշտության եւ եղբայրության ուղին բաց է մեր առաջ: Թող Սուրբ Հոգին, որ առաջնորդում է մեզ ամենայն ճշմարտության (հմմտ. Հովհ. ԺՁ 13), զորացնի ամեն ազնիվ ջանք՝ ուղղված մեր մեջ սիրո եւ հաղորդության կամուրջների կառուցմանը:

Սուրբ Էջմիածնից մենք կոչ ենք անում մեր բոլոր հավատացյալներին միանալու մեզ աղոթքով, սուրբ Ներսես Շնորհալու խոսքերով. «Փառավորյա՛լ Տեր, ընդունիր ծառաներիդ աղաչանքները եւ ի բարին կատարիր մեր խնդրանքները՝ բարեխոսությամբ սուրբ Աստվածածնի, Հովհաննես Մկրտչի, Սուրբ Ստեփանոս Նախավկայի, մեր սուրբ Գրիգոր Լուսավորչի, սուրբ առաքյալների, մարգարեների, վարդապետների, մարտիրոսների, հայրապետների, ճգնավորների, կույսերի եւ Քո բոլոր երկնային ու երկրային սրբերի: Եվ Քեզ՝ անբաժանելի Սուրբ Երրորդությանդ, փառք եւ երկրպագություն, հավիտյանս հավիտենից, ամեն»:

Ս. Էջմիածին, 26 հունիսի, 2016

Նորին Սրբություն Գարեգին Բ

Նորին Սրբություն Ֆրանցիսկոս

❖❖❖

Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի Հայաստան այցի վերջին հանգրվանը Խորվիրապի պատմական վանքն էր:

Հունիսի 26-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Հռոմի Սրբազան Քահանայապետը պատվիրակությունների ուղեկցությամբ այցելեցին Խորվիրապ, ուր նրանց դիմավորեցին Մայր Աթոռի վանորեից տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը, Հայ Եկեղեցու եպիսկոպոսներ եւ վանորեից տեսչության ներքո սպասավորող հոգեւորականներ:

Թափորով երկու Հովվապետերն առաջնորդվեցին դեպի Խորվիրապի վանքի շրջաբակը: Վանքում երկու Հովվապետերը մուտք գործեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռ, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Հռոմի Պապը գբից հանված կենսապարգեւ լույսով վառեցին իրենց մոմերը:

Այնուհետեւ Ս. Աստվածածին եկեղեցում նույն այդ լույսից վառվեց այցի առիթով Ֆրանցիսկոս Պապի կողմից Խորվիրապի վանքին ընծայված կանթեղը:

Ապա Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապը հայերեն եւ իտալերեն լեզուներով խաղաղության համար աղոթք հնչեցրեցին:

Այս ընթացքում Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Վազգենյան հոգեւոր դպրանոցի երգչախմբերի կողմից կատարվեց համաքրիստոնեական սուրբ եւ Հայ Եկեղեցու երկրորդ Լուսավորիչ սբ Գրիգորին նվիրված «Լերինք ամենայն» հոգեպարար շարականը:

Արարողությունը եզրափակվեց միասնական՝ Տերունական աղոթքով:

Վերջում Ամենայն Հայոց Հայրապետն ու Հռոմի Սրբազան Քահանայապետն առաջնորդվեցին դեպի բիբլիական Արարատ լեռը նայող բարձրահարթակ, որտեղից, ի նշան խաղաղության, հայ-թուրքական փակ սահմանի ուղղությամբ արձակվեց երկու աղավնի:

Վանք այցելությունից հետո «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում տեղի ունեցավ հրաժեշտի պաշտոնական արարողություն, որից հետո Ֆրանցիսկոս Պապը, ավարտելով այցն առաջին քրիստոնյա երկիր, վերադարձավ Վատիկան:

Այցի օրերին Հռոմեականաթոլիկ Եկեղեցու Հովվապետը, հյուրընկալվելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, բնակվեց Մայր Աթոռում:

Ստորագրվեց գործակցության համաձայնագիր Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Ս. Վլադիմիր ճեմարանի միջեւ

Հունիսի 17-ին, օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Ս. Վլադիմիր ուղղափառ ճեմարանի (ԱՄՆ) միջեւ գործակցության համաձայնագրի ստորագրման արարողությունը:

Արարողությունը բացվեց միասնական՝ Տերունական աղոթքով, հնչեցին ՀՀ եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի օրհներգերը: Բացման խոսքով հանդես եկավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանը.

«Դեռեւս անցյալ դարակեսին Հայ Եկեղեցու հոգեւորականներն արդեն իսկ հարաբերություններ են սկսել Նյու Յորքի Ս. Վլադիմիր հոգեւոր ճեմարանի հետ, որ մինչ այժմ, կարելի է ասել, օրթոդոքս աշխարհից դուրս օրթոդոքս ավանդության ամենից կարեւոր կրթական բարձրագույն հաստատություններից մեկն է:

Անցյալ դարակեսին Ս. Վլադիմիր ճեմարանն աստվածաբանների այնպիսի փաղանգ է տեսել, ինչպիսիք էին Գեորգի Ֆլորովսկին, Նիկոլայ Լոսկին, Ալեքսանդեր Շմեմանը, Զոն Մայենդորֆը եւ ուրիշներ, ովքեր օրթոդոքս աստվածաբանությունը մի նոր բարձունքի հասցրեցին եւ դարձան ավանդական եւ մերօրյա աստվածաբանական մոտեցումների կամրջողները:

Համագործակցության յուրաքանչյուր փորձ սովորաբար նոր շունչ եւ նոր եռանդ է տալիս ուսումնական հաստատություններին: Ս. Վլադիմիր ճեմարանի տեսուչ Զոն Բեռի հետ մեր ստորագրելիք այս համաձայնագրով պիտի ամրագրվեն մեր հաստատությունների միջեւ հարաբերությունների սերտացմանն ու զարգացմանն ուղղված նպատակները:

.... Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Ս. Վլադիմիրի միջեւ համաձայնագրի ստորագրմամբ մենք հույս ունենք, որ պիտի առավել սերտանան նաեւ մեր Եկեղեցիների միջեւ կապերը կրթության ոլորտում»:

Այնուհետեւ օրվա առիթով խոսք ասացին նաեւ Ս. Վլադիմիր ուղղափառ ճեմարանի տեսուչ դոկտոր Զոն քհն. Բեռը եւ Ս. Ներսես հայկական ընծայարանի տեսուչ (ԱՄՆ) Մարտիրոս ավագ քհն. Չեյանը:

Զոն Բեռը, հաղորդելով իր տպավորությունները, ընդգծեց, որ իրեն շատ լավ է զգում առաջին քրիստոնյա երկրում, քանի որ մոտիկից հնարավորություն է ընձեռվել ծանոթանալու քրիստոնեական արժեքներին: Անդրադառնալով համաձայնագրի կնքմանը՝ նա փաստեց, որ այս նախագիծը յուրահատուկ առիթ է՝ ընդլայնելու այն համագործակցությունը, որ երկար տարիներ է, ինչ Ս. Վլադիմիր ճեմարանն ունի Ս. Ներսես ընծայարանի հետ:

Իսկ Մարտիրոս ավագ քահանան իր

խոսքում գոհունակությամբ փաստեց, որ օրը նշանակալից է նաեւ նրանով, որ Ս. Ներսես ընծայարանը, ունենալով ընդամենը շուրջ կեսդարյա պատմություն, այսօր կապող օղակ է այս համաձայնագիրը կյանքի կոչելու գործում:

Օրվան համահունչ ասմունքեց ճեմարանական սաներից մեկը, իսկ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբը կատարեց կոմիտասյան երգեր սբ Պատարագի հատվածից քաղված:

Հանդիսությունն ամփոփվեց Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանի խոսքով:

Գեւորգ սրբազանն իր մասնավոր գնահատանքը բերեց նախագիծը կյանքի կոչող բոլոր անձանց, ապա հավելեց. «Այս համաձայնագրի ստորագրումը բխում է միջազգային կապերի ոլորտում Գեւորգյան ճեմարանի որդեգրած քաղաքականությունից. այն տրամաբանական շարունակությունն է նախորդ զարգացումների: Վստահ եմ, որ ապագայում երկուստեք ականատես կլինենք բարերար արդյունքի, այն ոչ միայն կհարստացնի հոգեւոր կրթության ոլորտում մեր ունեցած փորձառությունը, այլեւ կնպաստի երկու Եկեղեցիների միջեւ հարաբերությունների խորացմանը: Թո՛ղ Աստված օրհնի Գեւորգյան, Ս. Վլադիմիր եւ Ս. Ներսես ճեմարանների առաքելությունը»:

Պայմանագրի ստորագրումը եզրափակվեց Պահպանիչ աղոթքով:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Հունիսի 28-30-ը, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով՝ ընդլայնված կազմով:

Ժողովի նիստերը վարեցին Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը եւ Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմի առաջնորդ Հայկազուն եպիսկոպոս Նաջարյանը:

Ժողովին քննության առնվեցին միջեկեղեցական հարաբերություններին, ներեկեղեցական կյանքին եւ եկեղեցական ժողովական կառույցներին վերաբերող հարցեր:

Ժողովի ընթացքում մասնավոր անդրադարձ կատարվեց Հռոմի Սրբազան Քահանայապետի այցելությանը Հայաստան: Այս կապակցությամբ Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց, որ դեռեւս 2014 թ. Հայաստան հրավիրված Հռոմի Ֆրանցիսկոս Պապը, 2015 թ. նամակով հաստատելով այցի իրականացումը 2016 թվականին, հունիսի 24-26-ը եղբայրական այցով եղավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, որն անցավ հոգեւոր ջերմ մթնոլորտում: Այցի վերաբերյալ զեկույցով հանդես եկավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիվանապետ եւ այցի կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը:

ԳՀԽ անդամներն ուրախությամբ արձանագրեցին, որ Ֆրանցիսկոս Պապի եռօրյա այցը Հայաստան լավագույն վկայությունն էր Հայաստանյայց Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ առկա եղբայրական ջերմ հարաբերությունների եւ գործակցության: Ժողովականները նաեւ իրենց գնահատանքը հայտնեցին այցի կազմակերպիչ հանձնախմբին եւ կազմակերպական աշխատանքներին մասնակցած բոլոր անձանց:

Ժողովին ԳՀԽ անդամների ուշադրությունը հրավիրվեց նաեւ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Նուրհան արքեպիսկոպոս Մանուկյանի դիմումին՝ Երուսաղեմի Ս. Հարության տաճարում Տիրոջ Ս. Գերեզմանի նորոգության հարցում Հայոց Եկեղեցու մասնակցության մասին: Ընդգծելով Երուսաղեմի կարեւորությունը համազգային կյանքում եւ սրբոց տեղյաց պահպանության գործում Հայոց Եկեղեցու պատասխանատվությունը՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը՝ նախագահությամբ Ամենայն Հայոց Հայրապետի, հանձնառու եղավ օժանդակելու Երուսաղեմի Հայոց Պատրիարքությանը եւ աշխարհասփյուռ թեմերի միջոցով ապահովելու անհրաժեշտ գումարը:

Հոկտեմբերի 31-ից նոյեմբերի 4-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում գումարվելիք Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի կազմակերպչական աշխատանքների իրականացման մասին զեկուցեց ժողովի կազմակերպիչ հանձնախմբի ատենապետ Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը:

Կանոնադրությունների մշակման հանձնախմբի ատենապետ, ԱՄՆ հայոց արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը ԳՀԽ ժողովին ներկայացրեց հանձնախմբի կողմից մշակված Ազգային-եկեղեցական ժողովի եւ Գերագույն հոգեւոր խորհրդի կանոնադրությունների նախագծերը: Քննարկումների ընթացքում նախագծերի հոդվածների վերաբերյալ արվեցին տարբեր առաջարկներ եւ նկատառումներ, որոնց հիման վրա հանձնախմբին հանձնարարվեց լրամշակել նախագծերը եւ ներկայացնել ԳՀԽ առաջիկա ժողովին:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սոցիալական ծառայությունների գրասենյակի տնօրեն Մարկոս քահանա Մանգասարյանը զեկույց ներկայացրեց «Աջակցություն Արցախին» ծրագրի մասին՝ անդրադառնալով Մայր Աթոռի կողմից Հայ Եկեղեցու աշխարհասփյուռ թեմերում կազմակերպված հանգանակություններին, ինչպես նաեւ՝ Մայր Աթոռի զանազան կառույցների եւ թեմերի կողմից Արցախ ուղարկված հումանիտար օգնությանը:

Գոհունակություն հայտնելով եկեղեցական կառույցների եւ թեմերի կողմից ցուցաբերած աջակցության առնչությամբ՝ Գերագույն հոգեւոր խորհուրդը կարեւորեց այս ուղղությամբ աշխատանքների շարունակությունը՝ զորավիգ լինելու արցախահայությանը եւ նրա կարիքներին:

Ժողովը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության եւ գնահատանքի խոսքով եւ Պահպանիչ աղոթքով:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հերթական դրամական օժանդակությունը ցուցաբերվեց սիրիահայ 100 ընտանիքի

Հունիսի 20-ին՝ Փախստականների միջազգային օրվա առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակը դրամական օժանդակություն ցուցաբերեց սիրիահայ կարիքավոր 100 ընտանիքի:

«ՀԱԼԷՊ» հայրենակցական բարեսիրական հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպված միջոցառումն սկսվեց միասնական աղոթքով: Ապա օրվա առիթով ներկաներին խոսքով դիմեց Մայր Աթոռի սոցիալական ծառայությունների գրասենյակի տնօրեն Մարկոս քին. Մանգասարյանը՝ անդրադառնալով հայրենիքում ապաստանած սիրիահայերի խնդիրներին: Նա նշեց, որ սիրիահայերի կարիքներն ու հուզող հարցերը մշտապես Հայ Եկեղեցու եւ անձնապես Վեհափառ Հայրապետի ուշադրության եւ հոգածության ներքո են:

Միջոցառմանը ներկա էր նաեւ Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ Իսահակ վրդ. Պողոսյանը: Վերջինս իր օրհնությունը բերեց ներկա հայորդիներին՝ իր հերթին կարեւորելով սոցիալական գրասենյակի առաքելությունը մեր ժողովրդի կյանքում:

Անցկացվեց կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների համաժողով



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնը հունիսի 13-17-ը «Աղվերան պարկ ռեզորթ» հաստատությունում «Վորլդ Վիժն» (World Vision) բարեգործական կազմակերպության աջակցությամբ անցկացրեց կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների համաժողով, որին մասնակցեց շուրջ հարյուր ուսուցիչ՝ Հայ Եկեղեցու հայաստանյան տարբեր թեմերից:

Հանդիպումների յուրաքանչյուր օրն սկսվեց Սուրբ Գրքի սերտողությամբ եւ ավարտվեց հավաքական աղոթքով: Համաժողովի շրջանակներում մասնակիցներին ներկայացվեց սբ Պատարագի խորհուրդը:

Համաժողովի հինգ օրվա ընթացքում թեմատիկ բանախոսություններով հանդես եկան Տավուշի թեմի առաջնորդ Բագրատ եպս Գալստանյանը, Արթիկի թեմի առաջնորդական տեղապահ Նարեկ վրդ. Ավագյանը, Քրեակատարողական հիմնարկներում հոգեւոր ծառայության պատասխանատու Ռուբեն վրդ. Զարգարյանը, Եպիսկոպոսաց ժողովի գրասենյակի տնօրեն Զաքարիա վրդ. Բաղումյանը, Արարատյան հայրապետական թեմից Նշան քին. Ալավերդյանը, Աբգար քին. Մարգարյանը եւ Հայաստանի աստվածաշնչային ընկերության ծրագրերի պատասխանատու տիար Արշավիր Գաբուջյանը:

Խմբային աշխատանքներն ուղղորդեցին Աննա Խաչատրյանը եւ Շիրակի թեմից Նշան քին. Պանֆյորովը: Խմբային աշխատանքների արդյունքում ուսուցիչները պատրաստեցին կիրակնօրյա դպրոցի առաքելությունը ներկայացնող կոլաժներ:

Համաժողովի ընթաքում՝ սբ Սահակ Պարթեւ Հայրապետի եւ սբ Մեսրոպ Մաշտոց Վարդապետի հիշատակության օրը, մասնակիցներն Աղվերանի 12-րդ դարի Ս. Աստվածածին խոնարհված եկեղեցում ներկա գտնվեցին սբ Պատարագին, որը մատուցեց ՔԴԿ-ի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը:

Համաժողովի ավարտին, արդեն տարիների ավանդույթի համաձայն, մասնակիցները՝ շնորհակալ զգացումներով, հավաքական աղոթք հղեցին առ Աստված՝ Ամենայն Հայոց Հայրապետի կենաց արեւշատության եւ երկարամյա արդյունաշահ գահակալության համար:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոն

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝ «Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝ krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 6.7.2016 թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ